# Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձանց իրավունքների ոտնահարումները Հայաստանում. այլընտրանքային զեկույց

## Ներկայացված է Մարդու Իրավունքների Կոմիտեի 105-րդ նստաշրջանի քննարկման համար

## Հուլիս 2012, Ժնև

Ներկայացված է Մարդու Իրավունքների Կոմիտե հետևյալ կազմակերպությունների կողմից.

- Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ (ՓԻՆՔ Արմենիա)
- Հանուն մարդկային կարիքների և մարդու իրավունքների «Հրրթլենդ» Դաշինք
- ԻԼԳԱ Եվրոպա-Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանս և ինտերսեքս անձանց Եվրոպական տարածաշրջանային Ասոցացիա
- Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի Մարդու իրավունքների միջազգային կլինիկա

## Բովանդակություն

**Համառոտ ակնարկ**……..……..…...3

**Ներածություն**…...……..….5

**Ընդհանուր տեղեկություններ**……..8

**Հիմնարար խախտումներ**…..…..……10

Հոդված 2 և 26 (Խտրականության արգելումը և հավասարությունն օրենքի առջև)……10

Հոդված 3 (Իրավահավասարությունը կանանց և տղամարդկանց միջև)…..….18

Հոդված 6 (Կյանքի իրավունքը)……..……..……20

Հոդված 7, 9 և 10 (Խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելումը, անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը և ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը)……22

Հոդված 16 և 17 (Իրավասուբյեկտության ճանաչումը և անձնական կյանքի իրավունքը)…….....27

Հոդված 19 և 20 (Սեփական կարծիքն ունենալու և ազատ արտահայտվելու իրավունքը, ատելության ցանկացած քարոզչության արգելումը)……...29

**Առաջարկություններ**…….....35

## ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սույն զեկույցը պատրաստվել է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (ՓԻՆՔ Արմենիա) հասարակական կազմակերպության, Հանուն մարդկային կարիքների և մարդու իրավունքների «Հըրթլենդ» Դաշինքի, ԻԼԳԱ-Եվրոպայի (Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանս և ինտերսեքսուալ անձանց Եվրոպական տարածաշրջանային ասոցացիա), ինչպես նաև Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի Մարդու իրավունքների միջազգային կլինիկայի կողմից և նախատեսված է Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) Մարդու իրավունքների կոմիտեի (այսուհետ՝ «ՄԻԿ» կամ «Կոմիտե») կողմից սույն թվականի հուլիսի 9-ից հուլիսի 27-ն ընկած ժամանակահատվածում Շվեյցարիայի Ժնև քաղաքում գումարվող 105-րդ նստաշրջանի քննարկման համար առ այն, թե Հայաստանն ինչպես է իրականացնում Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով (այսուհետ «Դաշնագիր» կամ «ՔՔԻՄԴ») ստանձնած իր պարտավորությունները:

Սույն զեկույցի նպատակն է լուսաբանել մարդու իրավունքների համատարած և պարբերական բնույթ կրող խախտումները, որոնց զոհ են դառնում լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձինք Հայաստանում: Այս խախտումներն էլ ավելի մտահոգիչ են դարձել վերջին ժամանակներս ԼԳԲՏ համայնքի նկատմամբ բռնության աճի, ինչպես նաև 2012 թվականի մայիս ամսվա ընթացքում բռնության հրահրման քարոզչության լույսի ներքո: Մասնավորապես, զեկույցը Կոմիտեի ուշադրությանն է ներկայացնում Դաշնագրի հետևալ խախտումները.

- Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը խիստ ճնշող է ԼԳԲՏ անձանց նկատմամբ, ինչն իր հերթին արտացոլված է ԼԳԲՏ համայնքի դեմ ուղղված պետական պաշտոնյաների հայտարարություններում:
- Պետությունը չի պաշտպանում ԼԳԲՏ անձանց խարանից և ատելության կոչերից, քանի որ այն չի ընդունում ատելության քարոզչությունը քրեականացնող իրավական ակտ, որը կպաշտպանի նաև ԼԳԲՏ անձանց:
- Հայաստանում անձը ենթարկվում է խտրականության սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կրթության, զբաղվածության, ինչպես նաև առողջապահության բնագավառներում թե՛ պետական և թե՛ ոչ պետական մարմինների կողմից:
- Թեև ոչ պատշաճ զեկուցումները խեղաթյուրում են ճշգրիտ թվերը, այնուամենայնիվ, տեղի իրավապաշտպան կազմակերպություններն ահազանգում են զինված ուժերում խաղաղ պայմաններում զգալի թվով զոհերի մասին, այդ թվում և ԼԳԲՏ անձանց զոհերի: Նույնասեռական և երկսեռական տղամարդիկ, ովքեր ծառայում են բանակում հատկապես վտանգի տակ են գտնվում: Պետությունը չի կարողանում պատշաճ կերպով

կանխել, հետաքննել և/կամ դատական կարգով հետապնդել սեռական կողմնորոշման և գենդերային ինքության հիմքով կատարված սպանության դեպքերը:

- Նույնասեռական և երկսեռական տղամարդիկ ենթարկվում են դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի զինված ուժերում իրենց պարտքը կատարելիս, ինչպես նաև անազատության մեջ գտնվելիս: Որոշ դեպքերում պետությունն ինքն է պատասխանատու այս չարաշահումների համար և այն չի կարողանում պատշաճ կերպով կանխել, հետաքննել և/կամ դատական կարգով հետապնդել ԼԳԲՏ անձանց դեմ ուղղված բռնության դեպքերը:
- Պետությունը հրաժարվում է ընդունել տրանսգենդեր անձանց գենդերային ինքնությունը: Մերժելով տրամադրել համապատասխան անձը հաստատող փաստաթղթեր տրանսգենդեր անձանց՝ պետությունն այսպիսով չի ճանաչում անձի իրավասուբյեկտությունը:

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս այլընտրանքային զեկույցը՝ ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների մասին, պատրաստվել և ներկայացվել է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (ՓԻՆՔ Արմենիա) հասարակական կազմակերպության, Հանուն մարդկային կարիքների և մարդու իրավունքների «Հըրթլենդ» Դաշինքի, ինչպես նաև Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի Մարդու իրավունքների միջազգային կլինիկայի[1] համատեղ ջանքերով:

Հայաստանը միացել է Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին 1993 թվականի հունիսի 23-ին[2]: Հայաստանը ներկայացրել է իր երկրորդ և երրորդ համատեղ պարբերական զեկույցը Դաշնագրի 40-րդ հոդվածի մասով 2010 թվականի նոյեմբերի 22-ին [3] , որը սակայն չի անդրադառնում Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակային նկարագրությանը: Դաշնագիրը երաշխավորում է պետության կողմից երաշխավորված անձանց պաշտպանությունը, ինչի ապահովումը իր հերթին պետք է իրականացվի պետության վրա դրված պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունների հիման վրա: Այս իրավունքները երաշխավորվում են անդամ պետության տարածքում կամ իրավասության տակ գտնվող բոլոր անձանց՝ անկախ այն բանից, թե տվյալ անձը ինչ իրավական կարգավիճակ ունի տվյալ երկրի ներպետական օրենսդրության համաձայն[4]:

Վերջին ժամանակներս ՄԱԿ-ի տարբեր կառույցներ բազմիցս կոչ են արել անդամ պետություններին երաշխավորելու, որ իրենց ներպետական իրավական ակտերն ապահովում են խտրականության արգելումը կախված սեռից, սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից [5] : Այս կոչերը կարևոր քայլ են

---

[1] Այս զեկույցի հեղինակներն են Քեյսի Արելլանոն (J.D. 2013, Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոց) և Ժակլին Փաուերզը (J.D. 2013, Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոց)՝ Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի Միջազգային մարդու իրավունքների կլինիկայի պրոֆեսոր Շանա Թաբակի ղեկավարությամբ: Հատուկ շնորհակալություն Ստեֆանո Ֆաբենիին (Հանուն մարդկային կարիքների և մարդու իրավունքների Հըրթլանդ Դաշինք, Սեռականության և Մարդու Իրավունքների Համաշխարհային Նախաձեռնության տնօրեն) և Մամիկոն Հովսեփյանին (ՓԻՆՔ Արմենիա ՀԿ, նախագահ) զեկույցի մշակման ընթացքում ուղեցույց հանդիսանալու համար, ինչպես նաև բազմաթիվ հայ և միջազգային ակտիվիստների և հասարակական կազմակերպությունների, ովքեր արժեքավոր տեղեկատվություն, այդ թվում զեկույցներ, մեկնաբանություններ տրամադրեցին զեկույցի մշակման համար:

[2] Պետության կողմից Վավերացումը, Մարդու Քաղաքացիական և Քաղաքական Իրավունքների Միջազգային Դաշնագիր, տե՛ս http://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=IV-4&chapter=4&lang=en:

[3] Հայաստանի Երկրորդ և Երրորդ պարբերական զեկույց, ՄԱԿ փաստաթուղթ N CCPR/C/ARM/2-3 (Նոյեմբեր 22, 2010):

[4] ՄԻԿ թիվ 31 Ընդհանուր Մեկնաբանություն, CCPR/C/21/Rev.1/Add.13, 4¶ 10, մայիս 26, 2004:

[5] Եզրափակիչ դիտարկումներ, Ջամայկա, ¶ 8 (2011) UN Doc. CCPR/C/JAM/CO/3:

հանդիսանում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության առաջընթացի համար, ինչը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Խորհրդի կողմից գնահատվեց որպես առաջնային մտահոգություն, երբ վերջինս 2011 թվականի հունիս ամսին ընդունեց 17/19 բանաձևը «*Մարդու իրավունքների, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության*» մասին[6]:
Մասնավորապես, Կոմիտեն լուրջ մտահոգություն է հայտնել լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց իրավունքների վերաբերյալ ՔՔԻՄԴ համապատասխանելիությունը մի շարք պետությունների համար դիտարկելիս:
Ջամայկայի պետության վերաբերյալ իր վերջերս արված եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն խրախուսեց պետությանը քայլեր ձեռնարկել՝ պաշտպանելու անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունից: Այն հայտարարեց, որ Ջամայկան «պետք է հանդես գա հստակ ուղերձով, որ չի հանդուրժում ոտնձգության, խտրականության կամ բռնության որևէ դրսևորում անձի նկատմամբ կախված նրա սեռական կողմնորոշումից»[7]: Կոմիտեն նույն կերպով առաջարկեց Ռուսաստանի Դաշնությանը ապահովել «արդյունավետ պաշտպանություն ի դեմս բռնության և խտրականության՝ կախված անձի սեռական կողմնորոշումից» [8] : Դեռ ավելին, Մոլդովայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն նշեց, որ «անդամ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի պայքարելու սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեմ»[9]: Վերոնշյալ օրինակները պետք է ուղեցույց հանդիսանան Հայաստանի կառավարության համար:

Բացի դրանից, Մարդու իրավունքների խորհրդի կողմից 2010 թվականի համընդհանուր պարբերական դիտարկման ժամանակ ներկայացվեց Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից պատրաստված տեղեկատվության ամփոփումը, համաձայն որի Հայաստանում «սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը համատարած բնույթ ունի և ոլորտում տիրում է անպատժելիությունը» և «սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների զոհերը պաշտպանություն գրեթե չեն ստանում»[10]:

---

[6] ՄԱԿ Մարդու Իրավունքների Խորհուրդ, Հանձնարարական 17/19, Մարդու իրավունքներ, սեռական կողնորոշում և գենդերային ինքնություն, ՄԱԿ փաստաթուղթ A/HRC/17/L.9/Rev.1 (Հունիս 17, 2011).
[7] Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ. Ջամայկա, ¶ 8 (2011) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/JAM/CO/3:
[8] Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ. Ռուսաստան, ¶ 27 (2009) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/RUS/CO/6:
[9] Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ. Մոլդովա, ¶ 14 (2009) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/MDA/CO/2:
[10] ՄԱԿ Մարդու Իրավունքների Խորհուրդ, *Համընդհանուր պարբերական դիտարկման համառոտ նկարագիր,* էջեր 3, 6 (Փետրվար 5, 2010), *տե՛ս* http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/106/65/PDF/G1010665.pdf:

Չնայած սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ խնդիրների ուսումնասիրության և մարդու իրավունքների պաշտպանության կարևորությանը, Հայաստանը նույնիսկ չի հիշատակել այդ խնդիրները Կոմիտեին ներկայացրած իր զեկույցում [11] : Պետությունը չի կարողացել երաշխավորել անձանց մի շարք իրավունքների պաշտպանությունը, իսկ որոշ դեպքերում նույնիսկ չի ճանաչել, որ այդ խախտումները տեղի են ունենում: Դրանք ներառում են անձի խտրականության չենթարկվելու իրավունքը, կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, կյանքի իրավունքը, խոշտանգումներից, դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքը, ազատության իրավունքը, անձեռնմխելիության իրավունքը, իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը, անձնական կյանքի իրավունքը, խոսքի ազատության իրավունքը և ատելության քարոզչությունից զերծ մնալու իրավունքը:

[11] Հայաստանի Երկրորդ և Երրորդ պարբերական զեկույց, ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/ARM/2-3 (Նոյեմբեր 22, 2010):

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն այլընտրանքային զեկույցը ներկայացնում է գեյ, լեսբուհի, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց իրավունքների իրավիճակային նկարագրությունը Հայաստանում:

Լինելով համատարած սոցիալական և համակարգային խտրականության թիրախում՝ Հայաստանի գեյ, լեսբուհի, բիսեքսուալ և տրանսգենդեր անձինք բախվում են մեծ պայքարի հավասարության հասնելու համար՝ ինչպես անհատական, այնպես էլ կազմակերպչական մակարդակներով: Չնայած Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի մի շարք դաշնագրեր, պայմանագրեր և իրավական այլ փաստաթղթեր՝ այն գործնականում չի իրականացրել ստանձնած այդ պարտավորությունները սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանն առնչվող հարցերի տեսանկյունից[12]:

Հոմոֆոբիան համատարած և խորապես արմատացած երևույթ է հայ հասարակության մեջ: ԼԳԲՏ համայնքի տեսանելիությունը սահմանափակ է: Հասարակության մեջ բոլոր ոլորտներում անձինք ենթարկվում են խտրականության և մարդու իրավունքների խախտումների՝ կախված իրենց սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից: Առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ ԼԳԲՏ անձինք դառնում են ֆիզիկական և հոգեբանական բռնության զոհ ՀՀ Զինված ուժերում իրենց պարտքը կատարելիս: Հայաստանում բոլոր տղամարդիկ, 18-ից 27 տարեկանն ընկած ժամանակահատվածում, պարտավոր են ծառայել ՀՀ Զինված ուժերում[13]: Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցներից մեկի համաձայն «Բազմաթիվ ԼԳԲՏ անձանց համար զինվորական ծառայության անցնելն ավելի վատ է, քան ազատազրկման դատապարտվելը»[14]: Հարկ է նաև նշել, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության քարոզչությունն առավել համատարած է մեծ քաղաքներում:

Հայ հասարակությունը խիստ ավանդապաշտ է և կրոնասեր: Հայաստանի բնակչության 90 տոկոսից ավելին Հայ Առաքելական եկեղեցու (այսուհետ՝ Եկեղեցի) հետևորդներ են, որը դատապարտում է նույնասեռականությունը որպես անբարոյական երևույթ[15]: Հայաստանում ԼԳԲՏ անձանց թույլատրվում է Եկեղեցի այցելել, բայց չի թույլատրվում հաղորդություն ստանալ[16]: Հայաստանի առաքելական

---

[12] Ա. Քարոլ և Ս. Քուին, ԼԳԲՏ Անձինք Հայաստանում (ԻԼԳԱ Եվրոպա, 2009), 24:
[13] Նույն փաստաթուղթը, էջ 38:
[14] Նույն փաստաթուղթը, էջ 38:
[15] Նույն փաստաթուղթը, էջ 35:
[16] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ, նախագահ (Մարտ 30, 2012), Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի Մարդու իրավունքների միջազգային կլինիկայի հետ համատեղ:

եկեղեցու նստավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մամլո խոսնակ, Տեր Վահրամ Մելիքյանը նույնասեռականությունը սահմանեց որպես «մեղք» և «բացասական երևույթ» [17]: Եկեղեցին կազմակերպում է հանրային քննարկումներ մոլության թեմաներով, ներառյալ «համասեռա-մոլությունը» թեմայով: Այս քննարկումներն այնուհետև հեռարձակվում են ազգային հեռուստատեսությամբ[18]: Ի հավելումն նշենք, որ Հայաստանի երկու այլ՝ Եհովայի վկաներ և Նեոհեթանոսական շարժում կրոնական կազմակերպությունները նունպես հրապարակավ դատապարտել են հոմոսեքսուալությունն ու տրանսսեքսուալությունը[19]:

Այս զեկույցի հիմնական շեշտը նույնասեռական և երկսեռական տղամարդկանց իրավունքների ոտնահարումների լուսաբանումն է: Զեկույցի այսպիսի ուղղվածությունը մի քանի պատճառներ ունի: Առաջինը, Հայաստանում ԼԳԲՏ համայնքը համախմբված չէ: Լեսբուհիները մասնավորապես չեն ընդունվում հասարակության կողմից, իսկ լեսբուհի ակտիվիստները մեկուսացված են նույնիսկ նույնասեռական և երկսեռական անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններից[20]: Երկրորդ, Հայաստանում չկա միջսեռականների որևէ համայնք[21]: Երրորդ, Հայաստանում կան տրանգենդեր անձինք, բայց նրանց թիվը շատ քիչ է և հիմնականում կենտրոնացված է Երևանի կենտրոնական հատվածում[22]: Չկա նաև որևէ ճշգրիտ վիճակագրություն Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ[23]:

---

[17] Մարիաննա Գրիգորյան, *Հայաստան.նույնասեռականներն ապրում են բռնության սպառնալիքով* EURASIANET.ORG (Մարտ 30, 2010), http://www.eurasianet.org/departments/civilsociety/articles/eav033110b.shtml:

[18] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ, նախագահ (Մարտ 21-22, 2012), Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի Մարդու իրավունքների միջազգային կլինիկայի հետ համատեղ ֆայլում:

[19] Նույն փաստաթուղթը:

[20] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:

[21] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18:

[22] Նույն փաստաթուղթը:

[23] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 25:

## 2. ՀԻՄՆԱՐԱՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

### Ա. Հոդված 2 (Խտրականության արգելումը) և 26 (Հավասարությունն օրենքի առջև)

Դաշնագրի հոդված 2-ի 1-ին մասը, ինչպես նաև հոդված 26-ը սահմանում են հարգանքը, հավասարությունը և խտրականության արգելումը ցանկացած անձի նկատմամբ, այդ թվում և խտրականության արգելումը կախված ռասայից, մաշկի գույնից և սեռից: Իր նախադեպային՝ *Թունենն ընդդեմ Ավստրալիայի* 1994թ. որոշման մեջ Կոմիտեն ոչ միայն եզրակացրեց, որ համաձայն Դաշնագրի հոդված 2-ի 1-ին մասի և հոդված 26-ի «սեռ» տերմինը պետք է ներառի սեռական կողմնորոշումը, այլ նաև այն, որ փոխհամաձայնեցված նույնասեռ հարաբերությունները քրեականացնող օրենքները բացահայտ կերպով ոտնահարում են անձի անձնական կյանքի անձեռնմխելիությունը՝ համաձայն Դաշնագրի 17-րդ հոդվածի[24]: Միայն վերջին տասներկու ամիսների ընթացքում Կոմիտեն հինգ անգամ կոչ է արել անդամ պետություններին ապաքրեականացնել չափահաս անձանց միջև նույնասեռ հարաբերությունները[25]: Դեռ ավելին, այն կոչ է արել, որ առնվազն երեք անդամ պետություններ քայլեր ձեռնարկեն վերացնելու նախապաշարմունքային և խտրական վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ[26]:

Չնայած Հայաստանն ապաքրեականացրել է նույնասեռականությունը դեռևս 2003 թվականին[27], այնուամենայնիվ, նույնասեռական անձինք դեռևս ենթարկվում են խտրական և անհանդուրժողական վերաբերմունքի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության պատճառով թե՛ պետական, թե՛ ոչ պետական մարմինների կողմից[28]: Հայ հասարակությունում նույնասեռական լինելը դիտվում է որպես

---

[24] *Թունենն ընդդեմ Ավստրալիայի*, CCPR/C/50/D/488/1992, ՄԱԿ Մարդու Իրավունքների Կոմիտե (ՄԻԿ), 4 ապրիլ 1994, տե՛ս http://www.unhcr.org/refworld/docid/48298b8d2.html [մուտք՝ 28 սեպտեմբեր 2011]:

[25] Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ, Եթովպիա. ¶ 12 (2011) ՄԱԿ փաստաթուղթ՝ CCPR/C/ETH/CO/1; Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ, Կոլումբիա, ¶ 14 (2010), ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/TGO/CO/4; Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ, Ջամայկա, ¶ 8 (2011) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/JAM/CO/3; Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ, Իրան, ¶ 10 (2011) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/IRN/CO/3; Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ, Քուվեյթ, ¶ 30 (2011) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/KWT/CO/2:

26 Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ, Գվատեմալա ¶ 11 (2012) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/GTM/CO/3 (խմբագրված տարբերակ); Մոնղոլիա, ¶ 9 (2011) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/MNG/CO/5; Մարդու Իրավունքների Կոմիտե, Եզրակացություններ, Լեհաստան, ¶ 8 (2010) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/POL/CO/6:

[27] ՀՀ Քրեական օրենսգրքի (1961 թ.) 116-րդ հոդվածը սահմանում էր. «Տղամարդու սեռական հարաբերությունը տղամարդու հետ (արվամոլություն)՝ պատժվում է ազատազրկմամբ մինչև հինգ տարի ժամանակով»:

[28] Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, *Հայաստանի նույնասեռականները երկար ճանապարհ ունեն հասնելու ազատության*, 13 մարտ, 2009, տե՛ս http://www.unhcr.org/refworld/docid/49c0ae641e.html [մուտք՝ 3 ապրիլ 2012]; Գայանե Մկրտչյան,

դժբախտություն: Հանրության կողմից բացասական վերաբերմունքը, ինչպես նաև ԶԼՄ-ներում նույնասեռականության վերաբերյալ բացասական հոդվածներն էլ ավելի մեծ տարածում գտան, երբ 2008 թվականի դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ը հանդես եկավ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության արգելումը խրախուսող հայտարարությամբ [29] : Այս առիթով հոգեբան Դավիթ Գալստյանը նշեց, որ «Հասարակության մեջ վախ կա նույնասեռականների նկատմամբ, մարդիկ նրանց գազաններ են համարում»[30]: Ըստ ՓԻՆՔ-ի 2011 թվականին Երևանում, Գյումրիում և Վանաձորում անցկացրած սոցիոլոգիական հետազոտության՝ բնակչության 72.1%-ը բացասական վերաբերմունք ունի նույնասեռականների նկատմամբ[31]: Դեռ ավելին, տրանսգենդեր անձինք չեն ընդունվում հասարակության կողմից, քանզի վերջիններս ընկալվում են որպես «կանացի հագուստ կրող նույնասեռականներ» և սեռական ծառայություն տրամադրող անձինք[32]:

Հարկ է նաև նշել, որ խտրականության արգելման սկզբունքն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում: ՀՀ Սահմանադրության հոդված 3-ը սահմանում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» [33] : Համաձայն Սահմանադրության, որն ընդունվել է 1995 թվականին, միջազգային իրավական ակտերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս են կազմում [34] : Չնայած Հայաստանը միացել է ՔՔԻՄԴ-ին 1993 թվականին, իսկ Մարդու իրավունքների կոմիտեի կողմից հավասարության ապահովումը ու սեռական կողմնորոշման վրա հիմնված խտրականության արգելումը տեղի են ունեցել միայն դրանից հետո՝ 1994

---

*Հետազոտություն. Հայ հասարակության մեծ մասն անհանդուրժող է սեռական փոքրամասնությունների նկատմամբ*, ARMENIA NOW (Հոկտեմբեր, 2011), http://www.armenianow.com/social/human_rights/32494/armenia_lesbian_gay_bisexual_transgender:

[29] Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, տե՛ս նշում 28; Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, ԱՄՆ Պետքարտուղարություն, Մարդու իրավունքների զեկույց 2009, Հայաստան (մարտ 11, 2010), http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/2009/eur/136018.htm:

[30] Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, տե՛ս նշում 28:

[31] Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ, *Հասարակական կարծիքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում* (2011), http://www.pinkarmenia.org/publication/lgbtsurveyen.pdf:

[32] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16; Սառա Խոջոյան *Հայաստանում նույնասեռականները բախվում են անհանդուրժողականության և խտրականության*, Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, http://iwpr.net/report-news/armenian-gays-face-intolerance-discrimination, (Jul. 5, 2010):

[33] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 3, 1995թ. և 2007թ.:

[34] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 6, 1995թ. և 2007թ.:

թվականին [35] , այնուամենայնիվ, պետությունն իր 1995 թվականին ընդունած Սահմանադրության մեջ չի ներառել հավասարությունն ու խտրականության արգելումը կախված սեռական կողմնորոշումից: Հայաստանը, համաձայն ներպետական և միջազգային իրավական նորմերի, ունի պարտավորություն ապահովելու հավասարությունն ու խտրականության արգելումը կախված անձի սեռական կողնորոշումից, սակայն ինչպես ցույց է տալիս զեկույցը, վերջինս դե յուրե և դե ֆակտո խախտել է այդ պարտավորությունը:

Հայաստանի պետական պաշտոնյաները նույնպես հանդես են եկել մի շարք հայտարարություններով՝ ուղղված ԼԳԲՏ համայնքի դեմ: Մասնավորապես, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը հայտարարեց, որ ԼԳԲՏ անձինք «սպառնալիք» են հանդիսանում Հայաստանի ազգային անվտանգության համար, քանի որ նույնասեռականությունը «ծայրահեղ վտանգավոր» և «անընդունելի» երևույթ է Հայաստանի համար [36] : Նմանատիպ հայտարարություններով հանդես եկան նաև Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամներ Կարեն Ավագյանն ու Էդուարդ Շարմազանովը. Ավագյանը նշեց. «…եթե այդ մասին իմանամ (որ անձը նույնասեռական է) այլեւս նրա հետ չեմ շփվի»[37], իսկ Շարմազանովը հայտարարեց, որ «…չի ընդունում … սեռական փոքրակասնություններին և կտրականապես դեմ է նրանց գոյությանը» [38] : Բացի դրանից, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Էմմա Խուդաբաշյանը մի առիթով խրախուսել է մարդկանց «քարեր նետել» նույնասեռականների ուղղությամբ[39]: Դեռ ավելին, ՀՀ Երևան քաղաքի քաղաքապետը տեղական մի լրատվամիջոցի հայտնել է, որ «մաքրելու է քաղաքը» տրանսգենդեր մարմնավաճառներից[40]:

---

[35] *Թունենն ընդդեմ Ավստրալիայի*, CCPR/C/50/D/488/1992, ՄԱԿ Մարդու Իրավունքների Կոմիտե (ՄԻԿ), 4 ապրիլ 1994, տե՛ս http://www.unhcr.org/refworld/docid/48298b8d2.html [մուտք՝ 28 սեպտեմբեր 2011]:

[36] Artmika, *Արթուր Բաղդասարյանն ասում է, որ նույնասեռականությունը «չափազանց վտանգավոր» է Հայաստանի համար*, UNZIPPED: GAY ARMENIA (Դեկտեմբեր, 2010), http://gayarmenia.blogspot.com/2010/12/unnatural-national-security-topbottom.html:

[37] Artmika, *Ներկայացնում ենք մեկ այլ հայ ֆանատիկի-հայ բժիշկ Կարեն Ավագյան*, UNZIPPED: GAY ARMENIA (Փետրվար. 2009), http://gayarmenia.blogspot.com/2009/02/introducing-yet-another-bigot-armenian.html:

[38] Նույն փաստաթուղթը:

[39] Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, տե՛ս նշում 28:

[40] «Ժամանակ», *Տարոն Մարգարյանն ընդդեմ միասեռականների*, NEWS AM (Դեկտեմբեր 23, 2011), http://news.am/eng/reviews/2832.html; Գայանե Աբրահամյան, *Ապրելով ստվերում. Հայ միասեռականներն ասում են, որ արժանանում են արհամարհանքի և բռնության*, ARMENIA NOW (հոկտեմբեր 2010), http://www.armenianow.com/social/human_rights/25533/armenian_gays_lesbians_prostitutes_transgenders; Artmika, *Ինչպես են ՀԿ ներկայացուցիչները ձախողում Երևանի քաղաքապետին մի փունջ հոմոֆոբ խոսքով*, UNZIPPED: GAY ARMENIA (Փետրվար 2012), http://gayarmenia.blogspot.com/2012/02/how-pr-reps-failed-yerevan-mayor-with.html; Մարիաննա Գրիգորյան, *Հայաստանում նույնասեռականներն ապրում են բռնության սպառնալիքով*, EURASIANET.ORG (մարտ 30, 2010), http://www.eurasianet.org/departments/civilsociety/articles/eav033110b.shtml:

Պետական պաշտոնյաների կողմից արված հայտարարությունները, որոնք դատապարտում են անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով, նպաստում են ողջ հասարակության մեջ ԼԳԲՏ անձանց դեմ նախապաշարմունքների ամրապնդմանը: Ուստի և, պետությունը չի կարողանում հետամուտ լինել ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը՝ ապահովելու խտրականության արգելումը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով, ինչպես նախատեսված է Դաշնագրի 2 և 26 հոդվածներով: ԼԳԲՏ անձինք մշտապես ենթարկվում են խտրականության հետևյալ չորս՝ (1) առողջապահության, (2) կրթության, (3) զբաղվածության, (4) բնակարանային ոլորտներում:

i. <u>Խտրականություն առողջապահության ոլորտում</u>

Առողջապահական ծառայությունների մատչելիությունը սերտորեն կապված է ՔՔԻՄԴ-ի կողմից սահմանված խտրականության արգելման սկզբունքի հետ [41]: Հայաստանում ԼԳԲՏ անձինք շարունակաբար ենթարկվում են խտրականության առողջապահական ծառայություններ ստանալիս [42]: Մի շարք բժիշկներ խտրականության են ենթարկում ԼԳԲՏ անձանց՝ հրաժարվելով բժշկական ծառայություններ տրամադրել վերջիններիս իրենց փաստացի կամ հնարավոր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով: Ուստի, համապատասխան բժշկական ծառայություններից օգտվելու համար ԼԲԳՏ անձինք հաճախ դիմում են ԼԳԲՏ հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների կողմից իրականացվող ուղղորդման ծառայություններից[43]: Նույնասեռական և երկսեռական տղամարդիկ կարող են նաև խտրականության ենթարկվել արյուն նվիրաբերելու ժամանակ: Արյուն նվիրաբերելու համար տղամարդ պացիենտը պետք է տեղեկացնի բժշկական ծառայություններ տրամադրող անձին, թե արդյո՞ք նա ունեցել է սեռական հարաբերություն տղամարդու հետ, ինչի դեպքում էլ նրան կարող են արգելել արյան դոնոր հանդիսանալուց [44]: Երբ տղամարդը զորակոչվում է ՀՀ Զինված ուժեր և քննող բժիշկը որոշում է, որ նորակոչիկը նույնասեռական է, ապա այդ անձը հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից ճանաչվում է ոչ պիտանի զինվորական ծառայության համար հոգեկան խանգարում ունենալու պատճառով՝ համաձայն ՀՀ Պաշտպանության նախարարության հրամանի [45]: Հանձնաժողովի կողմից այսպիսի պրակտիկան փաստում է Հայաստանի ողջ առողջապահական համակարգ ներթափանցած հոմոֆոբ վերաբերմունքի և դիրքորոշման մասին:

---

[41] *Տե՛ս ՄԱԿ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ և Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, տեղ. թերթիկ N 31: Առողջության իրավունք,* էջ 7-8, տե՛ս http://www.ohchr.org/Documents/Publications/Factsheet31.pdf:

[42] Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, *տե՛ս նշում* 29:

[43] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18:

[44] Տես նշում 43:

[45] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:

Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը լուրջ խնդիր է հանդիսանում ԳԲՏ անձանց համար[46]: Միայն 2001-ից 2009 թվականների ընթացքում ՄԻԱՎ վարակի աճը 25% է կազմել[47]: Համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության տվյալների՝ 1988-ից մինչև 2012 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1,204 դեպք, մինչդեռ միայն 2011 թվականի ընթացքում գրանցվել է վարակի 182 նոր դեպք[48]: Ըստ պաշտոնական գնահատման, ներկայումս Հայաստանում կա ՄԻԱՎ-ով ապրող 3,500 մարդ[49]:

Չնայած Հայաստանի կառավարությունն աջակցում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին[50], այնուամենայնիվ, շատ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդիկ ենթարկվում են խարանի և խտրականության ողջ հանրապետությունում, ուստի հաճախ չեն ունենում այլընտրանք, քան հասարակությունից մերժված լինելով մեկուսացված ապրելը[51]: Սա կարող է մասամբ պայմանավորված լինել խնդրի վերաբերյալ կրթության, տեղեկատվության և իրազեկվածության լուրջ պակասի հետ[52]: Դեռ ավելին, «ԼԳԲՏ անձանց և մյուս խոցելի խմբերի նկատմամբ խարանն ու խտրականությունը նպաստում են ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարածմանը»[53]: Շատերն, այդ թվում և ԼԳԲՏ անձինք, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հետազոտություն չեն անցնում, որովհետև կարծում են, թե կարող են այն ձեռք բերել հետազոտությունն անցնելիս, ինչն էլ իր հերթին նպաստում է ամեն տարի վարակի նորանոր դեպքերի ավելորդ տարածմանը[54]:

Հայաստանի կառավարությունը մշակել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ռազմավարություն, որի արդյունքում ստեղծվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիթորինգի և

---

[46] ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն, ՀՀ Առողջապահության նախարարություն http://www.armaids.am/main/free_code.php?lng=1&parent=3 Համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության՝ թմրամիջոցների միջոցով վարակված բոլոր անձինք տղամարդիկ են, իսկ կանանց 98.3%-ը վարակվել են սեռական ճանապարհով: Ըստ ՓԻՆՔ-ի, այս տվյալները հետագայում պարզաբանեցին, որ կանայք հիմնականում վարակվում են հետերոսեքսուալ ճանապարհով: *Տե՛ս* ՓԻՆՔ Արմենիայի և Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի Մարդու իրավունքների միջազգային կլինիկայի *էլ-փոստային խոսակցությունը ՁՎՄԻՄԿ համատեղ ֆայլում,* Հունիս 9, 2012:

[47] Նանոր Բարսումեան, *ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը Հայաստանում,* THE ARMENIAN WEEKLY (հունիս 2011), http://www.armenianweekly.com/2011/06/03/aids-in-armenia/:

[48] *ՄԻԱՎ/ՁԻԱՀ իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում,* ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն, ՀՀ Առողջապահության նախարարություն http://www.armaids.am/main/free_code.php?lng=1&parent=3:

[49] Նույն փաստաթուղթը:

[50] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:

[51] Նանոր Բարսումեան, տե՛ս նշում 43:

[52] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:

[53] Լիանա Աղաջանյան, *Լռությունը լուծում չէ. Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեպքերը,* IANYAN (դեկտեմբեր 2, 2010), http://www.ianyanmag.com/2010/12/02/armenians-march-increased-hiv-rates/:

[54] Նանոր Բարսումեան, տե՛ս նշում 47:

գնահատման ազգային համակարգ[55]: Այնուամենայնիվ, պետությունը դեռևս պետք է զգալիորեն բարելավի իր առողջապահական և կրթական ծրագիրը: Պետությունը պարտավոր է պայքարել այն խարանի և խտրականության դեմ, որին պարբերաբար ենթարկվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդիկ և կանխել ՄԻԱՎ-ի տարածումը՝ երաշխավորելով վարակի նկատմամբ ապահով հետազոտությունը և բուժօգնության հասանելիությունը:

Տրանսգենդեր անձինք մասնավորապես են ենթարկվում խտրականության, երբ իրենց անհատական կարիքների բավարարման համար դիմում են առողջապահական ծառայությունների: Հայաստանում չեն իրականացվում սեռափոխման վիրահատություններ[56]: Ինչպես նշում է մի լրագրող, քանի որ հայ բժիշկները սեռափոխման վիրահատություն չեն իրականացնում, նրանք խորհուրդ են տալիս տրանսգենդեր անձանց դիմել վիրահատության արտասահմանում, որն իր հերթին ենթադրում է մի շարք ծախսեր՝ կապված ճանապարհորդության, բնակության և արտոնագրերի հետ[57]: Ինչպես նշել է մի աղբյուր, եթե տրանսգենդեր անձինք դիմեն սեռափոխության արտասահմանում, ապա կարող են «մոռանալ Հայաստան վերադառնալու մասին», քանի որ չեն ընդունվի հասարակության կողմից[58] :

ii. <u>Խտրականություն կրթության ոլորտում</u>

Հայաստանում ԼԳԲՏ անձինք ենթարկվում են խտրականության նաև կրթության ոլորտում[59] : Համաձայն ԻԼԳԱ-Եվրոպա և COC-Նիդերլանդներ կազմակերպությունների կողմից Հայաստանում իրականացված ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ հատուկ փաստահավաք առաքելության՝ տարրական և միջնակարգ դպրոցները հաճախ սեռական կրթությունը չեն ներառում դպրոցական ծրագրի մեջ, քանի որ այն ուսումնական ծրագրում չներառելը դպրոցների հայեցողությունն է[60]: Այս ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ «դեռևս վաղ տարիքից երեխաները տեղեկանում են ԼԳԲՏ անձանց վերաբերյալ տաբուի մասին»[61]: Համաձայն տեղի ԼԳԲՏ իրավապաշտպանների զեկույցների՝ կառավարության

---

[55] Նույն փաստաթուղթը:

[56] ՓԻՆՔ, *Մենք և մեր իրավունքները*, 2010, http://pinkarmenia.org/wp content/uploads/2010/05/waoren.pdf, մուտք՝ 3 August 2010:

[57] Artmika, *ՊԽԼԻ կլոր սեղան քննարկում ԼԳԲՏ հարցերի շուրջ; «Տրանսեքսուալ տղամարդկանց և կանանց խորհուրդ են տալիս գնալ արտասահման»*, UNZIPPED: GAY ARMENIA (Սեպտեմբեր 2010), http://gayarmenia.blogspot.com/2010/09/iwpr-roundtable-on-lgbt-issues.html:

[58] Նույն փաստաթուղթը:

[59] Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, տե՛ս նշում 29; Հելսինկյան Ասոցիացիա, Զեկույց Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների իրավիճակի մասին, 2011, էջ 85, տե՛ս http://www.hahr.am/files/report2012eng_1.pdf:

[60] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:

[61] Նույն փաստաթուղթը:

ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագիրը դպրոցներում իրականացվում է թերի մասնագիտական պատրաստվածությամբ և ոչ կոմպետենտ մասնագետների կողմից[62]:

Դեռ ավելին, ԼԳԲՏ երիտասարդները համադասարանցիների կողմից ենթարկվում են հոգեկան և էմոցիոնալ հետապնդման (bullying), ինչպես նաև ենթարկվում են ծաղրի ուսուցիչների կողմից[63]: Այս ուսանողներից շատերը վախենում են հրապարակավ խոսել թեմայի շուրջ վերջինիս զգայուն լինելու պատճառով: Ս.Կ.-ն, 19-ամյա մի երիտասարդ, ով սովորում էր Երևանի պետական համալսարանում և ենթարկվել էր բուլինգի, դասախոսին հայտնեց, որ հետաքրքրված է և ցանկանում է գրել Հայաստանում սեռականության, այդ թվում և նույնասեռականության պատմության մասին[64]: Դասախոսը պատասխանեց հարցնելով, թե արդյո՞ք Ս.Կ.-ն նույնասեռական է, և որպեսզի ուսանողը չգրի աշխատությունն այդ թեմայով, ասաց նրան, որ վերջինս չի կարող «օբյեկտիվ» լինել թեմայի շուրջ նույնասեռական լինելու պատճառով՝ այսպիսով բուլինգի ենթարկելով վերջինիս[65]: Խտրականության այս տեսակը տարածված է բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների շրջանում, և Երևանի պետական համալսարանում նման միջադեպեր պատահել են[66]: Եթե ուսանողը որոշում կայացնի իր աշխատությունը գրելու ԼԳԲՏ անձանց խնդիրների մասին կամ եթե ցանկանա բացահայտ կերպով արտահայտել իր գենդերային ինքնությունը, դա կունենա իր բացասական ազդեցությունը ուսանողի առաջադիմության վրա[67]:

Չկարողանալով ապահովել երիտասարդների շրջանում խտրականության արգելումը կախված անձի սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից, ներառյալ ֆիզիկական և հոգեբանական տեռորը ուսուցիչների և հասակակիցների կողմից ինչպես տարրական և միջնակարգ դպրոցներում, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ պետությունը չի իրականացրել իր՝ սեռով պայմանավորված խտրականության դեմ պայքարելու պարտավորությունը՝ համաձայն Դաշնագրի 2 և 26 հոդվածների:

iii. <u>Խտրականություն զբաղվածության ոլորտում</u>

---

[62] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:
[63] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18; Artmika, *Բուլինգը Հայաստանում*, UNZIPPED: GAY ARMENIA (ապրիլի 19, 2012), http://gayarmenia.blogspot.com/2012/04/bullying-in-armenia.html:
[64] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:
[65] Նույն փաստաթուղթը:
[66] Նույն փաստաթուղթը:
[67] Նույն փաստաթուղթը:.

ԼԳԲՏ համայնքը սեռական կողմնորոշման հիմքով խտրականության է ենթարկվում նաև զբաղվածության ոլորտում[68]: Ինչպես նշում են ԼԳԲՏ ակտիվիստները, եթե գործատուն իմանում է իր աշխատակցի նույնասեռական լինելու մասին, նա կարող է հեռացնել այդ անձին աշխատանքից՝ վկայակոչելով լիովին այլ հանգամանքներ, քան սեռական կողմնորոշումն է[69]: Գործատուները մշտապես հեռացնում են աշխատանքից կարճաժամկետ աշխատանքային պայմանագրով աշխատող ԼԳԲՏ անձանց, ինչն էլ որպես արդարացնող հանգամանք են օգտագործում վերջիններիս աշխատանքի նորից չընդունելու համար[70]:

Աշխատանքից հեռացվելուց հետո ԼԳԲՏ անձինք պետք է աշխատանք փնտրեն այլ ոլորտում, որտեղ վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ ավելի բարյացակամ է, ներառյալ սննդի սպասարկման, վարսահարդարման, ծաղկի դիզայնի և սեռական ծառայությունների տրամադրման ոլորտում, որոնք սակայն այնքան էլ հեշտ հասանելի չեն[71]: Ըստ ԼԳԲՏ մի ակտիվիստի՝ «նույնասեռական տղամարդկանց մեծամասնությունը ներգրավվում է «մարմնավաճառության» մեջ ֆինանսական խնդիրների պատճառով»[72]: Բացի նրանից, որ ԼԳԲՏ անձինք ենթարկվում են խտրականության աշխատավայրում, նրանք նույնիսկ ապահով չեն զգում՝ դիմելու ոստիկանությանը կամ իրավաբանական ծառայությունների վերոնշյալ առիթով[73]:

iv. <u>Բնակարանային խտրականություն</u>

Հայաստանում ԼԳԲՏ համայնքը շարունակում է ապրել «անհանդուրժողականության մթնոլորտում» և ենթարկվում է խտրականության իր բնակավայրում[74]: Ընտանիքի և ընկերների կողմից մերժված լինելու պատճառով ԼԳԲՏ անձինք հեռանում են փոքր քաղաքներից և գյուղերից, որտեղ խտրականությունը տարածվում է տեղի ողջ հասարակությունում և տանտերերը հաճախ մերժում են տրամադրել իրենց բնակարանները ԼԳԲՏ վարձակալներին[75]: Ինչպես նշում է Երևան քաղաքի ԼԳԲՏ ակտիվիստներից մեկը, ԼԳԲՏ համայնքն իրեն համեմատաբար ապահով է զգում Հայաստանի միայն երեք քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում, որտեղ առողջապահական ծառայություններից օգտվելու, բնակարան և աշխատանք

---

[68] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18; Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, տե՛ս նշում 29; Հելսինկյան Ասոցացիա, Զեկույց Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների իրավիճակի մասին, տե՛ս նշում 598, էջ 85; Սառա Խոջոյան, տե՛ս նշում 32; Գայանե Աբրահամյան, *տե՛ս նշում* 40:

[69] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18; Սառա Խոջոյան, տե՛ս նշում 32:

[70] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18:

[71] Նույն փաստաթուղթը; Սառա Խոջոյան, տե՛ս նշում 32; Գայանե Աբրահամյան, *տե՛ս նշում* 40:

[72] Սառա Խոջոյան, տե՛ս նշում 32:

[73] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18; Գայանե Աբրահամյան, *տե՛ս նշում*40:

[74] Սառա Խոջոյան, տե՛ս նշում 32:

[75] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:

գտնելու հնարավորություններն ավելի մեծ են, քանի որ այս քաղաքներում կա ԼԳԲՏ համայնք[76]:

Չնայած թե՛ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածը, թե՛ Դաշնագրի 2 և 26 հոդվածներն արգելում են սեռով պայմանավորված խտրականությունը, այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը չի ձեռնարկել համապատասխան քայլեր՝ պաշտպանելու ԼԳԲՏ անձանց բնակարանային խտրականությունից:

**Բ. Հոդված 3 (Տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը)**

Դաշնագրի Հոդված 3-ն ապահովում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը[77]: Միասին 2 և 3 հոդվածները կոչ են անում, որ «անդամ պետությունները ձեռնարկեն բոլոր հնարավոր քայլերը, որպեսզի յուրաքանչյուր անձ օգտվի» Դաշնագրով ամրագրված իր իրավունքներից[78]: Սա նշանակում է, որ պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն «վերջ դնելու խտրական գործողություններին և՛ հանրային, և՛ մասնավոր ոլորտում, ինչը խոչընդոտում է իրավունքներից հավասար օգտվելու հնարավորության ապահովմանը»[79]:

Հայ հասարակությունում կնոջ ավանդական՝ որպես մոր և կնոջ դերը խիստ կարևորվում է, իսկ միայնակ կանայք հաճախ դիտվում են իբրև «չարիքի և դժբախտության» մարմնավորողներ[80]: Ուստիև, հայ հասարակության մեջ կանայք ենթարկվում են բազմապիսի բացասական վերաբերմունքի, ներառյալ բռնությունը կանանց նկատմամբ և մասնավորապես ընտանեկան և ամուսնական բռնությունը, ինչը մեծ տարածում ունի Հայաստանում[81]: Հաճախ բռնությունը կանանց կողմից ընկալվում է որպես բնականոն երևույթ, և կանայք չեն գիտակցում, որ հանդիսանում են ընտանեկան բռնության զոհ և այդպիսի դեպքերում չեն էլ համարձակվում դիմել ոստիկանություն[82]: Կանանց նկատմամբ բռնության դաժանությունն ու հաճախականությունը, ներառյալ բռնությունը լեսբուհի, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԲՏ) կանանց նկատմամբ, ցույց է տալիս, որ Հայաստանը չի կարողացել ապահովել կանանց իրավունքների պաշտպանությունը և տղամարդկանց ու կանանց նկատմամբ

[76] Նույն փաստաթուղթը:
[77] ՔՔԻՄԴ, Հոդված 3:
[78] ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտե [ՔՔԻՄԴ], Ընդհանուր մեկնաբանություն թիվ 28. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (հոդված 3), ¶ 3, ՄԱԿ փաստաթղթ. CCPR/C/21/Rev.1/Add.10 (մարտ 29, 2000) [այսուհետ՝ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 28]:
[79] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 28, տե՛ս նշում 78, ¶ 4:
[80] ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը Հայաստանում. Սոցիալ-մշակութային մոտեցում, ՅՈՒՆԵՍԿՕ 2005:
[81] Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, տե՛ս նշում 29:
[82] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18; Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, տե՛ս նշում 29:

հավասար վերաբերմունքը[83]:

Շնորհիվ կնոջ ավանդական դերի վերաբերյալ հասարակության ընկալման, ոչ ավանդական սեռական կողնորոշում կամ գենդերային ինքնություն ունեցող կանայք մեծապես մեկուսացված են նույնիսկ այն հասարակական կազմակերպություններից, որոնք զբաղվում են նույնասեռական և երկսեռական անձանց խնդիրներով[84]: Այս կանանց մեջ մտնում են լեսբուհի, բիսեքուալ և տրանսգենդեր կանայք: Հարկ է նշել, որ սեռական հարաբերությունները կանանց միջև երբեք չեն քրեականացվել, ինչպես դա պատահեց տղամարդու հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց հետ: Ուստի, երբ Հայաստանը վերացրեց քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածը, ապաքրեականացնելով այս հարաբերությունները, նույնասեռ հարաբերություններն ընկալվում էին որպես սեռական հարաբերություններ տղամարդկանց միջև, այլ ոչ թե կանանց[85]: Նույնասեռական կանանց նկատմամբ սակավ ուշադրության, ինչպես նաև այնպիսի միջավայրի գոյության պայմաններում, որտեղ կանանց միջև հանրային վայրերում մտերմությունն ընդունելի և սովորական երևույթ է, լեսբուհի կանայք կարող են ավելի հեշտությամբ ապրել և զերծ մնալ հոմոֆոբիայից, քան տղամարդիկ [86]:

ԼԲՏ կանանց փորձը ցույց է տալիս, որ վերջիններս հաճախ են հետապնդվում իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով: Համաձայն Հայաստանում ԼԳԲՏ մի կազմակերպության կողմից լեսբուհիների վերաբերյալ արված հետազոտության՝ նրանցից 61%-ին վերբալ վիրավորանքներ են հասցվել, 31%-ի նկատմամբ բռնություն է իրականացվել, իսկ 37%-ի անձնական զույքին վնաս է հասցվել կամ ոչնչացվել է: Դեռ ավելին, այս կանանց 70%-ի վրա թքել են, իսկ 24%-ին բռունցքով հարվածել և ծեծի են ենթարկել իրենց սեռական կողմնորոշման պատճառով: Լեսբուհիները նաև զեկուցում են սեռական ոտնձգությունների շատ դեպքերի մասին: Նրանցից 12%-ը ենթարկվել է հարձակումների, 20%-ը սեռական ոտնձգությունների, իսկ 1.5%-ը էլ բռնաբարության զոհ է դարձել: Հարկ է նշել, որ հարցված կանանց 79%-ը կարծում են, որ իրենց սեռական կողմնորոշումն է պատճառ հանդիսացել նման գործողությունների համար[87]:

Ի վերջո, հարկ է նշել, որ լեսբուհի և բիսեքսուալ կանայք չեն համարվում խոցելի

---

[83] *Տե՛ս ընդհանուր ՄԱԿ կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե* (CEDAW), *Եզրակացություններ* և ՄԱԿ փաստաթուղթ N CEDAW/C/GUA/CO7 (փետրվար 10, 2009).
[84] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:
[85] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 32:
[86] Skype հարցազրույց Քուիրինգ Երևանի անանուն անդամի հետ (մայիսի 24, 2012), Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի իրավագիտության դպրոցի Մարդու Իրավունքների Միջազգային Կլինիկայի հետ համատեղ ֆայլում:
[87] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 32, հղում Հայաստանի «*Մենք հանուն քաղաքացիական հասարակության*» հկ-ի կողմից արված հետազոտության:

խումբ՝ համաձայն ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ մի շարք փաստաթղթերի, չնայած այն հանգամանքին, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 25% -ը կանայք են[88]:

### Գ. Հոդված 6 (Կյանքի իրավունք)

Հոդված 6-ը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ ունի կյանքի անօտարելի իրավունք, և ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից: Կոմիտեն սահմանել է կյանքի իրավունքը որպես «բարձրագույն ուժ ունեցող իրավունք, որի նկատմամբ ցանկացած վերապահում արգելվում է»[89]: 2011 թվականի Ջամայկայի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանություններում Կոմիտեն կոչ արեց պետությանը խիստ հետևողական լինել սպանության վեճերի արտադատական կարգավորման ընթացքին և երաշխավորել այդ վեճերի շուտափույթ և արդյունավետ քննությունը՝ նմանատիպ հանցագործությունները կանխելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև անպատժելիության դեմ պայքարելու և զոհերին արժանի փոխհատուցում ապահովելու համար [90]: Չիրականացնելով համապատասխան քննություն ՀՀ զինված ուժերում նույնասեռական և երկսեռական տղամարդկանց մահվան դեպքերի վերաբերյալ՝ Հայաստանը խախտում է իր պարտավորությունը կապված Դաշնագրի 6-րդ հոդվածի հետ, քանի որ չի կարողանում երաշխավորել անձին կամայականորեն կյանքից զրկելու արգելքը:

Տեղի իրավապաշտպան կազմակերպությունները զեկուցում են ամեն տարի զինված ուժերում ոչ մարտական պայմաններում մահվան տագնապահարույց դեպքերի մասին [91]: Չնայած պաշտոնական տվյալների անհստակությանը՝ տեղի հասարակական կազմակերպությունների գնահատմամբ ՀՀ զինված ուժերում ամեն տարի զոհվում է մոտ քառասուն տղամարդ, ներառյալ ինքնասպանությունները, առողջական խնդիրների հետ կապված, ինչպես նաև մարտական և ոչ մարտական պայմաններում տեղի ունեցած դեպքերը [92]: Չնայած մահվան այս դեպքերը սովորաբար ներկայացվում են իբրև ինքնասպանություններ՝ տեղի և միջազգային իրավապաշտպան մի շարք կազմակերպություններ, ինչպիսիք են Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և մարդու իրավունքների պաշտպանության Հելսինկյան ասոցիացիան, փաստում են, որ շատ դեպքերում դիահերձման արդյունքում պարզվում է, որ զինվորը մահից առաջ ծեծի և բռնության է ենթարկվել [93]: Այս բռնությունների համար պատասխանատու են և՛ շարքային

[88] Նույն փաստաթուղթը, էջ 44:
[89] Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություններ, ԸՄ թիվ 14, սեպտեմբեր 11 (1984):
[90] Մարդու իրավունքների կոմիտե, Եզրակացություններ. Ջամայկա, ¶ 16 (2004) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/JAM/CO/3:
[91] HUMAN RIGHTS WATCH, *Համաշխարհային զեկույց 2012. Հայաստան* (Հունվար 2012), http://www.hrw.org/sites/default/files/related_material/armenia_0.pdf:
[92] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18:
[93] Նույն փաստաթուղթը:

ծառայողները, և՛ բանակի անձնակազմը[94]: Հայտնի չէ, թե այս զոհվածների քանի տոկոսն են կազմում ԼԳԲՏ անձինք, սակայն զինված ուժերում գտնվող նույնասեռականների նկատմամբ ճնշումները ու հալածանքը հիմք են հանդիսացել առնվազն մի զինծառայողի կողմից սպանության փորձ կատարելու համար[95] :

Տեղի հասարակական կազմակերպություններից մեկը տեղեկացրեց մի դեպքի մասին, երբ մի զինծառայող ինքնասպան է եղել նրանից հետո, երբ նրա տաս զինակից ընկերները բռնաբարել են իրեն[96]: Բացի դրանից, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը տեղեկացրեց մի դեպքի մասին, համաձայն որի քսանմեկամյա Թորգոմ Սարուխանյանին, ով զոհվել էր հրազենային վնասվածքից, ինքնասպանության էին հասցրել[97] : ՀՀ Պաշտպանության նախարարությունը ենթադրյալ սպանության գործը քննելուց հետո 2010 թվականին, ձերբակալեց երեք զինծառայողների՝ ինքնասպանության դրդելու մեղադրանքով, ինչպես նաև երեք տարի ազատազրկման դատապարտեց սպա Սասուն Գալստյանին իշխանազանցության համար[98]:

Չնայած հայտնի չէ, թե ինչ հիմքով է իրականացվել Սարուխանյանի սպասնությունը, նրա դեպքը միակը չէ: Առանց պաշտոնական տվյալների դժվար է պատկերացնել, թե վերոնշյալ սպանություններից քանիսը կարող են առնչություն ունենալ ԼԳԲՏ անձանց հետ, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ԼԳԲՏ նորակոչիկներից շատերը զինված ուժերում գտնվելու ժամանակ ջանքեր են գործադրում թաքցնելու իրենց սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը: Այնուամենայնիվ, պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի բացահայտելու այս սպանությունների պատճառները:

Անձի կյանքի իրավունքը երաշխավորելու համար՝ անկախ նրա սեռական կողնորոշումից և գենդերային ինքնությունից, Հայաստանը պարտավոր է խիստ հետևողական լինել զինված ուժերում սպանության դեպքերի նկատմամբ և պատշաճ կերպով իրականացնել դրանց քննությունը: Այն պետք է նաև նախատեսի կանխարգելիչ միջոցառումներ զինված ուժերում տեղի ունեցող ոտնձգություններն ու հետապնդումները վերացնելու համար՝ կանխելու բանակում մահվան հետագա դեպքերը[99]: Պետության կողմից այս բացթողումները, պաշտպանելու ԼԳԲՏ անձանց կյանքը զինված ուժերում, քննելու սեռական կողմնորոշման և գենդերային

---

[94] Նույն փաստաթուղթը:
[95] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:
[96] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18:
[97] HUMAN RIGHTS WATCH, *տե՛ս* նշում 91:
[98] 2010 թ. սեպտեմբերին YouTube-ում հայտնվեց մի տեսանյութ, որը ցույց էր տալիս, թե ինչպես է Գալստյանը ծեծում և նվաստացնում երկու զինծառայողների:
[99] Մարդու իրավունքների կոմիտե, Եզրափակիչ դիտարկումներ. Ջամայկա, ¶ 16 (2004) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/JAM/CO/3:

ինքնության հիմքով կատարվող հանցագործությունները, ապահովելու այդ հանցավոր դեպքերի պատշաճ քննությունն ու մեղավորներին պատասխանատվության ենթարկելը, հանդիսանում են Դաշնագրի 6-րդ հոդվածի մասով պետության կողմից իր պարտավորությունների ոչ պատշաճ կատարում:

### Դ. Խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելումը, անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը և ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը (Հոդվածներ 7, 9, 10)

Դաշնագրի 7 և 9 հոդվածները, ինչպես նաև 10-րդ հոդվածի 1-ին մասը ենթադրում են յուրաքանչյուր անձի՝ խոշտանգումներից, կամայական ձերբակալություններից, ինչպես նաև դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքը: Հոդված 7-ի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանություններում Կոմիտեն նշեց, որ անդամ պետություններն ունեն պոզիտիվ պարտավորություն իրականացնելու հատուկ ուսուցում իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում, ինչպես նաև պատասխանատվության ենթարկելու բոլոր նրանց, ովքեր խախտում են խոշտանգումներից ազատ լինելու անձի իրավունքը[100]: Այն նաև նշեց, որ պետք է արձանագրել բոլոր հարցաքննությունների տեղն ու վայրը, ինչպես նաև հարցաքննությանը ներկա բոլոր անձանց անունները, և այս տեղեկատվությունը պետք է մատչելի լինի դատական և վարչական վարույթների իրականացման համար: Իր 10-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանությունների ժամանակ Կոմիտեն սահմանեց, որ ազատությունից զրկված բոլոր անձանց նկատմամբ մարդասիրական և մարդկային անհատին հատուկ արժանապատիվ վերաբերմունքը հիմնարար և ունիվերսալ սկզբունք է, որը կիրառելի է առանց որևէ տարբերակման՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից սահմանափակման[101]:

Իր վերջերս արված Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն կոչ արեց վերջ դնելու մարդկանց «բռնի անհետացումներին», «կամայական ձերբակալություններին» [102], «խոշտանգումներին» և «բռնի տեղահանություններին»[103]: Այն վերահաստատեց, որ դատավորը չպետք է հաշվի առնի խոշտանգումների միջոցով ձեռք բերված

---

[100] Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 20, 10 մարտի 1992թ:
[101] Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 21, ¶ 4, 10 ապրիլի 1992թ:
[102] Մարդու իրավունքների կոմիտե, Եզրափակիչ դիտարկումներ, Տոգո, ¶ 17, ՄԱԿ փաստաթուղթ CCPR /C/TGO/CO/4, 18 ապրիլի 2011թ:
[103] Մարդու իրավունքների կոմիտե, Եզրափակիչ դիտարկումներ, Եթովպիա, ¶ 16 ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/ETH/CO/1, 25 հուլիս 2011թ:

ապացույցները [104], իսկ անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ վատ վերաբեմունքի վերաբերյալ բողոքների դեպքում պետությունը պարտավոր է ապահովել համապատասխան կառույցների կողմից գործերի պատշաճ և թափանցիկ քննությունը[105]:

Պետությունը չի կատարում Դաշնագրի 7, 9 հոդվածների և 10-րդ հոդվածի 1-ին մասով ստանձնած իր պարտավորությունները ԼԳԲՏ անձանց նկատմամբ հետևյալ երկու հիմնական ոլորտներում. 1) խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելումը, 2) անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Նույնասեռական և երկսեռական տղամարդիկ ենթարկվում են ֆիզիկական և հոգեբանական ճնշումների հատկապես զինված ուժերում ծառայելիս և անազատության մեջ գտնվելիս, իսկ ոստիկանությունը տրանսգենդեր անձանց կամայական կերպով զրկում է ազատությունից:

i. <u>Խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելումը</u>

Խոշտանգումների արգելումն իր մեջ ներառում է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև «անձին հոգեկան տառապանք պատճառող» արարքները, ներառյալ ահաբեկումներն ու սպառնալիքները [106] : Խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով հատուկ զեկուցողը նշել է, որ զգալի թվով խոշտանգման դեպքեր են տեղի ունենում անձանց նկատմամբ նրանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության պատճառով [107] : Մասնավորապես, հատուկ զեկուցողը նշել է, որ «սեռական փոքրամասնությունները ենթարկվում են ճնշումների, ստորացումների և վերբալ վիրավորանքների իրենց փաստացի կամ հնարավոր սեռական կողնորոշման և գենդերային ինքնության պատճառով, ինչպես նաև ֆիզիկական ոտնձգությունների, ներառյալ բռնաբարություններն ու սեռական ոտնձգությունները»[108]:

Հայաստանում ԼԳԲՏ անձինք ենթարկվում են և՛ հոգեբանական, և՛ ֆիզիկական հալածանքի հասարակության մեջ նույնասեռականների նկատմամբ ձևավորված

---

[104] Մարդու իրավունքների կոմիտե, Եզրափակիչ դիտարկումներ, Ղազախստան, ¶ 22, ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/KAZ/CO/1, 21 հուլիս 2011թ:
[105] Նույն փաստաթուղթը:
[106] Խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով հատուկ զեկուցող, ¶ 3, ՄԱԿ փաստաթուղթ A/56/156, (հուլիս 3, 2001), *տե՛ս* http://www.un.org/documents/ga/docs/56/a56156.pdf:
[107] Նույն փաստաթուղթը:
[108] Նույն փաստաթուղթը:

բռնություն և հոգեկան ճնշումներ խրախուսող մշակույթի պատճառով[109]: Օրինակ, մի բացահայտ նույնասեռական տղայի նրա հարևաններն առևանգել, տարել էին մի բնակարան, ստիպել էին մերկանալ և վերջինիս ծեծի էին ենթարկել[110]: Մի ուրիշ տղայի՝ Արմենին, ծնողները և եղբայրը ծեծի էին ենթարկել և տանից դուրս հանել, երբ իմացել էին վերջինիս սեռական կողմնորոշման մասին [111] : Չնայած ՀՀ Սահմանադրության պահանջների և Դաշնագրով ստանձնած պարտավորությունների՝ պետությունը չի ձեռնարկել համապատասխան քայլեր կանխելու ֆիզիկական և հոգեբանական հալածանքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ և պատասխանատվության ենթարկելու մեղավորներին:

Նույնասեռական և երկսեռական տղամարդիկ խոշտանգումների զոհ կարող են դառնալ հատկապես զինված ուժերում իրենց պարտքը կատարելիս: Բացահայտ նույնասեռական տղամարդիկ զինված ուժերում հաճախ են ենթարկվում ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, այդ թվում նաև սեռական ոտնձգությունների, իսկ երբեմն էլ համարվում են զինվորական ծառայության համար ոչ պիտանի «համասեռամոլություն» ունենալու պատճառով [112] : Մի շարք աշխատություններ վկայում են, որ ԼԳԲՏ անձինք, այդ թվում և երիտասարդները, ֆիզիկական ու հոգեբանական ճնշումների ենթարկվելիս ինքնասպանություն գործելու ռիսկային գոտում են գտնվում[113]:

Բազմաթիվ աղբյուրների համաձայն՝ զորակոչային հանձնաժողովը չի ցանկանում ԼԳԲՏ անձանց ներգրավել բանակում, իսկ այն դեպքերում, երբ զինծառայողը ակնհայտ նույնասեռական է լինում, վերջինս ուղղորդվում է հոգեբուժական հիվանդանոց հոգեբանական գնահատում ստանալու համար [114] : Նորակոչիկներին բազմաթիվ գնահատումների և թեստավորումների են ենթարկում պարզելու համար, թե արդյո՞ք նույնասեռական են, թե ոչ[115], ինչից հետո նրանց տրվում է հոգեկան շեղում ունենալու մասին վկայական, ինչի արդյունքում էլ վերջիններս ազատվում են զինվորական ծառայությունից[116]:

---

[109] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18:
[110] Նույն փաստաթուղթը:
[111] Մարիաննա Գրիգորյան, տե՛ս նշում 40:
[112] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18; Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, տե՛ս նշում 29:
[113] *Տե՛ս, օրինակ,* Ինքնասպանության ռիսկն ու կանխարգելումը Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր երիտասարդության շրջանում (Ինքնասպանության կանխարգելման ռեսուրսային կենտրոն, 2008):
[114] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18; Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38; Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, տե՛ս նշում 29:
[115] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:
[116] Նույն փաստաթուղթը, *էջ.* 38; Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, տե՛ս նշում 29:

Համաձայն ՀՀ Պաշտպանության նախարարության թիվ 378 հրամանի՝ նույնասեռականությունը համարվում է հիվանդություն, ուստի նույնասեռական անձինք ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար[117]: Բացի դրանից՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունն այն կարծիքին է, որ նույնասեռական տղամարդիկ կարող են վատ վերաբերմունքի արժանանալ մյուս զինծառայողների կողմից[118]: Համաձայն մի դեպքի, հայկական բանակում ծառայող մի զինվորի ախտորոշվել է «համասեռամոլություն» հիվանդությունը և վերջինիս հոսպիտալացրել են[119]:

Եթե նույնասեռական կամ երկսեռական անձը շարունակում է ծառայությունը բանակում, ապա վերջինս մեկուսացվում և հոգեբանական ճնշումների է ենթարկվում, այդ թվում և հետապնդվում ու ահաբեկվում է թե՛ այլ զինծառայողների և թե՛ հրամանատարների կողմից[120]: Նույնասեռական զինծառայողները մշտապես ենթարկվում են ստորացման այնպիսի գործողությունների արդունքում, ինչպիսիք են զինծառայողին կոտրված ափսեով առանձին կերակուր տալը, ստիպելը կատարելու ամենակեղտոտ հանձնարարություններ՝ զուգարան մաքրելը (հաճախ ատամի անձնական խոզանակով), ամենահեռավոր կամ ամենավատ պայմաններն ունեցող զորանոցներում ծառայելը[121]: Նույնասեռական և երկսեռական զինծառայողների վիճակն էլ ավելի անտանելի է դառնում, երբ վերջիններս գտնվում են Լեռնային Ղարաբաղի զորամասերում: Մինչ զինծառայողները տեղավորվում են ադրբեջանցիների կողմից լքված տներում, նույնասեռական անձինք ստիպված են լինում բնակեցնել տարածքի ամենածայրամասային հատվածները[122]:

Նույնասեռական և երկսեռական տղամարդիկ ենթարկվում են ֆիզիկական բռնության և սեռական ոտնձգությունների այլ զինծառայողների կողմից[123]: Ինչպես հաղորդեց «*Արմենիանաու*» լրատվական կայքը, 2006 թվականի փետրվարի 17-ին տասնութամյա զինծառայողը մի քանի անգամ բռնաբարվել և ծեծի էր ենթարկվել հրամանատարների կողմից[124]: Բացի դրանից, եղել են դեպքեր, երբ նույնասեռական

---

[117] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:
[118] Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, տե՛ս նշում 29:
[119] Նույն փաստաթուղթը:
[120] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 18:
[121] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38; Հելսինկիի Ասոցացիա, Մարդու իրավունքների տարեկան զեկույց, տե՛ս նշում 59, էջ 27:
[122] Հելսինկիի Ասոցացիա, Մարդու իրավունքների տարեկան զեկույց, տե՛ս նշում 59, էջ 27:
[123] Նույն փաստաթուղթը; Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38; ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ԿԱՐԻՔ ՀԿ, *Երիտասարդ տղան կարող էր բռնաբարվել բանակում* (մարտ 2009), http://pinkarmenia.blogspot.com/2009/03/young-guy-could-be-raped-at-army.html; Artmika, *Հոմոֆոբիայի դաժանությունը Հայաստանում*, UNZIPPED: GAY ARMENIA (մարտ 12, 2009), http://gayarmenia.blogspot.com/2009/03/brutality-of-homophobia-in-armenia.html:
[124] *Բռնություններ բանակում. Զինծառայողը հայտարարում է, որ զինակիցներն իրեն բռնաբարել են* ARMENIANOW (փետրվար 17, 2006), http://armenianow.com/news/6189/violence_in_the_ranks_army_conscri:

զինծառայողների նկատմամբ կիրառվել է «դեդովշինայի» մեթոդը շփոթեցնելու, ստելու և նրանց մեջ վախ սերմանելու համար[125]: Նույնիսկ ֆիզիկական բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած զինծառայողին կարող են բուժօգնություն չտրամադրել վերջինիս փաստացի կամ հնարավոր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով[126]:

Իրավիճակն ազատազրկման վայրերում նույնն է, ինչ զինված ուժերում՝ լի ֆիզիկական և հոգեբանական բռնություններով[127]: Շատ դեպքերում նույնասեռական և երկսեռական բանտարկյալները ազատազրկման դատապարտված այլ անձանց կողմից դիտվում են որպես սեռական կիրքը բավարարող օբյեկտներ և հաճախ սեռական բռնության են ենթարկվում վերջիններիս կողմից[128]: Անազատության մեջ գտնվող անձի նկատմամբ բռնաբարությունը Կոմիտեի կողմից սահմանվել է որպես խոշտանգում[129]:

Բացի դրանից, Հայաստանի ազատազրկման վայրերը գերբնակեցված են [130], քառասային, իսկ ամենադաժան վայրերը նախատեսված են ԼԳԲՏ անձանց համար[131]: ԼԳԲՏ բանտարկյալներին ենթարկում են ամենանվաստացուցիչ խտրականության՝ «ստիպելով կատարել նվաստացուցիչ աշխատանքներ»[132] և առանձնացնելով մյուս բանտարկյալներից[133]: ԼԳԲՏ անձինք մյուս կալանավորների կողմից ենթարկվում են հոգեբանական, ֆիզիկական և սեռական բնույթի բռնությունների, որը չի կանխվում հսկիչների կողմից, իսկ մեղավորների համար համապատասխան պատիժ չի սահմանվում [134] : Դեռ ավելին, հսկիչները կարող են արգելել ՄԻԱՎ ունեցող կալանավորներին ստանալու անհրաժեշտ բուժօգնությունը[135]:

Թե՛ զինված ուժերում և թե՛ կալանավայրերում ոճրագործները կարող են լինել պաշտոնյաները, իրենց հավասարակիցները, ինչպես նաև անազատության մեջ գտնվող անձինք: Քանի որ պետությունը վերահսկողություն է իրականացնում զինված ուժերի և ազատազրկման վայրերի նկատմամբ, ուստի այն պատասխանատու է վերոնշյալ վայրերում ԼԳԲՏ անձանց նկատմամբ իշխանազանցությամբ, ինչպես նաև անհատների կողմից իրականացված բռնության

---

[125] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:
[126] Հելսինկյան Ասոցացիա, Մարդու իրավունքների տարեկան զեկույց, տե՛ս նշում 59, էջ 27:
[127] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:
[128] Նույն փաստաթուղթը:
[129] CCPR/C/JAM/CO/3 (խմբագրված տարբերակ) Ժնև, 17 հոկտեմբեր – 4 նոյեմբեր 2011, տե՛ս http://www2.ohchr.org/english/bodies/hrc/hrcs103.htm:
[130] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:
[131] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:
[132] Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, *տե՛ս նշում* 29:
[133] Ա. Քարոլ և Ս. Քուին, տե՛ս նշում 12, էջ 38:
[134] Նույն փաստաթուղթը:
[135] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 30:

համար՝ Դաշնագրի 7 և 9 հոդվածների, ինչպես նաև 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

ii. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը

Պետությունը չի ապահովում ԼԳԲՏ անձանց, մասնավորապես սեռական ծառայություն տրամադրող տրանսվեստիտ անձանց ազատությունն ու անձեռնմխելիությունը: Հայաստանում կամայական բերման ենթարկելը, այդ թվում և Երևանի կենտրոնական այգում հավաքվող սեռական ծառայություն տրամադրող տրանսվեստիտ անձանց բերման ենթարկելը հանդիսանում է Դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին մասի խախտման վառ օրինակ: Ոստիկանությունը սեռական ծառայություն տրամադրող տրանսվեստիտ անձանց բերման է ենթարկում ոստիկանական բաժանմունքներ ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների նկատմամբ հետազոտության ուղարկելու համար [136]: Մի դեպքի առնչությամբ ոստիկանությունը հետազոտության ուղարկելու պատրվակով տրանսվեստիտ անձանց բերման էր ենթարկել և ոստիկանության բաժանմունքում պահել ողջ գիշեր՝ առանց որևէ բացատրության: Բացի դրանից՝ սեռական ծառայություններ տրամադրող տրանսվեստիտ անձինք մշտապես ֆիզիկական բռնության զոհ են դառնում ոստիկանության կողմից և որևէ պաշտպանություն չեն ստանում[137]: Հայտնի է, որ ոստիկանությունը սև ցուցակի մեջ է գրանցել այգու ԼԳԲՏ սեռական ծառայություն տրամադրող անձանց բջջային հեռախոսի համարները, որպեսզի չպատասխանի դրանց, երբ այդ անձինք օգնության կարիք կունենան[138]: Սպառնալով և որոշ դեպքերում սեռական ծառայություն տրամադրող տրանսվեստիտ անձանց ազատությունից ապօրինաբար զրկելով՝ ոստիկանությունը խախտում է Դաշնագրի 9-րդ հոդվածը՝ անձին կամայականորեն ազատությունից զրկելու արգելքը:

## Ե. Հոդված 16 և 17 (Իրավասուբյեկտության ճանաչման և անձի անձնական կյանքի իրավունքը)

Դաշնագրի 16 և 17 հոդվածները սահմանում են անձի իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև անձնական կյանքի իրավունքը: Համաձայն հոդված 16-ի՝ յուրաքանչյուր ոք «որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասուբյեկտության ճանաչման իրավունք»: Հոդված 17.1-ը սահմանում է, որ «արգելվում է կամայական

[136] Նույն փաստաթուղթը; Հելսինկյան Ասոցացիա, Զեկույց Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների իրավիճակի մասին, տե՛ս նշում 59, էջ 92-93:
[137] Հելսինկյան Ասոցացիա, Զեկույց Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների իրավիճակի մասին, տե՛ս նշում 59, էջ 91; Գայանե Մկրտչյան, տե՛ս նշում 40; Սառա Խոջոյան, *տե՛ս* նշում 32:
[138] Հելսինկյան Ասոցացիա, Զեկույց Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների իրավիճակի մասին, տե՛ս նշում 59, էջ 91:

կամ անօրինական միջամտությունն անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ»: Նույն հոդվածի 2-րդ մասն էլ ճանաչում է, որ «յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվածության իրավունք»: Իր թիվ 16 ընդհանուր մեկնաբանությունում Կոմիտեն նշեց, որ հոդված 17-ը ներառում է նաև անձի պատիվն և արժանապատվությունը, և պետությունները պարտավոր են համապատասխան օրենսդրական կարգավորում ապահովել այս հարցի շուրջ: Պետությունը նաև պարտավոր է ապահովել անձին անօրինական ոտնձգությունների դեմ իր իրավունքները պաշտպանելու և իրավական պաշտպանություն ստանալու արդյունավետ մեխանիզմով [139] : Կոմիտեն 1994 թվականի *Թունենն ընդդեմ Ավստրալիայի* նախադեպային որոշման կապակցությամբ սահմանեց, որ այն իրավական ակտերը, որոնք քրեական պատասխանատվություն են սահմանում չափահաս անձանց միջև նույնասեռ հարաբերությունների համար, խախտում են Դաշնագրի 17-րդ հոդվածը [140] : Միասին վերցրած՝ 16 և 17 հոդվածները պարտավորեցնում են պետություններին ճանաչել տրանսգենդեր անձանց գենդերային ինքնությունը, ինչը Հայաստանը չի իրականացնել:

Իրավական տեսանկյունից տրանսգենդեր անձինք չեն կարող փոխել իրենց սեռը, անունը կամ իրավական կարգավիճակը Հայաստանում [141] : Չկա որևէ իրավական ակտ, որը թույլ կտար ճանաչելու տրանսգենդեր անձանց նոր և/կամ նախընտրելի սեռը[142]: Բացի դրանից, չկա նաև տեղեկատվություն, համաձայն որի պարզ կդառնար, թե քանի՞ անձ է փորձել իրավաբանորեն փոխել իր սեռը, անունը կամ կարգավիճակը[143]:

---

[139] ՄԱԿ, Մարդու իրավունքների Կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 16. *Անձի անձնական, ընտանեկան կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության նկատմամբ հարգանքը, ինչպես նաև պատվի ու հեղինակության դեմ անօրինական ոտնձգությունը արգելքը: (Հոդ. 17)*, ¶ 11, (1988), տե՛ս.
http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/0/23378a8724595410c12563ed004aeecd?Opendocument:

[140] Ինչպիսին էլ լինի դրանց դրսևորումը, հոմոֆոբիան և տրանսֆոբիան հաճախ հիմք են հանդիսանում մարդու անձնական կյանքի իրավունքը խախտելու համար: Երբ անձը երկկողմանի համաձայնեցված սեռական հարաբերությունների մասնակից է դառնում՝ որպես իր անձնական կյանքի մի մաս, դա առաջ է բերում այդ անձի նկատմամբ մի շարք իրավունքների խախտման այլ անձանց կողմից: Ուստի, հոդված 17-ը չպետք է առանձնացվի ԼԳԲՏ իրավունքների մյուս ոտնահարումներից, այլ հակառակը՝ այն պետք է դիտարկվի որպես Դաշնագրով նախատեսված մարդու իրավունքների մյուս ոտնահարումների մի մաս: *Թունենն ընդդեմ Ավստրալիայի*, CCPR/C/50/D/488/1992, ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), 4 ապրիլ 1994, տե՛ս.
at: http://www.unhcr.org/refworld/docid/48298b8d2.html [մուտք 28 սեպտեմբեր 2011].

[141] Մարուքյան, Էդմոն. *Հոմոֆոբիա, Տրանսֆոբիա և Խտրականություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով,* իրավական զեկույց, Հայաստան, Մարդու իրավունքների Դանիայի ինստիտուտ 10 (նոյեմբեր 2010):

[142] Նույն փաստաթուղթը:

[143] Նույն փաստաթուղթը; Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:

Պետությունը խախտել է Դաշնագրի 16 և 17 հոդվածները, քանի որ չի ապահովել մեխանիզմներ, համաձայն որի տրանսգեներ անձինք կընդունվեն հասարակության կողմից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որի որոշումները Հայաստանի կողմից ենթակա են պարտադիր կատարման, նույնպես հանգել է այսպիսի եզրակացության: Իր *Լ.-ն ընդդեմ Լիտվայի* դատական գործով որոշման մեջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանեց, որ պետությունները պարտավոր են ճանաչել տրանսեքսուալ անձանց սեռափոխությունը վիրահատությունից հետո, այդ թվում և նրանց իրավական կարգավիճակի տվյալների համապատասխան փոփոխությունը՝ իրենից բխող բոլոր հետևանքներով[144]:
Այսինքն, Եվրոպական դատարանն այսպիսով մատնանշել է պետությունների պոզիտիվ պարտավորությունն ապահովելու անձնական կյանքի նկատմամբ հարգանքը, ներառյալ անձի արժանապատվության և կյանքի բարձր որակի երաշխիքները[145]:

### Զ. Հոդված 19 և 20 (Սեփական կարծիքն ունենալու և ազատ արտահայտվելու իրավունքը, ատելության ցանկացած քարոզչության արգելումը)

Դաշնագրի 19-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի առանց միջամտության սեփական կարծիքն ունենալու և ազատ արտահայտվելու իրավունք: Հոդված 20-ը պարտավորեցնում է անդամ պետություններին արգելելու ատելության ցանկացած քարոզչություն[146], ինչը Դաշնագիրը ձևակերպում է հետևյալ կերպ. «Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով»: Իր 2011 թվականին հրապարակված թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունում Կոմիտեն սահմանեց, որ Դաշնագրի 19 և 20 հոդվածները համապատասխանում և լրացնում են միմյանց, և հոդված 20-ով սահմանված բոլոր գործողությունները ենթակա են սահմանափակման համաձայն 19-րդ հոդվածի 3-րդ կետի: Ինչ վերաբերվում է ատելության քարոզչությանը, Կոմիտեն Լեհաստանի վերաբերյալ իր նախորդ Եզրափակիչ դիտարկումներում խորհուրդ տվեց պետությանը օրենքի ուժով արգելել խտրականությունը կախված սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, Քրեական օրենսգրքում սահմանել ատելության քարոզչությունը և ատելության հիմքով կատարված հանցագործությունների շարքում ներառել սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունները, ինչպես նաև իրականացնել մի շարք գործողություններ ուղղված ոստիկանության և

---

[144] *Լ.-ն ընդդեմ Լիտվայի,* թիվ 27527/03, ՄԻԵԴ 2008թ:
[145] Քրիսթինա Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 28957/95, ՄԻԵԴ 2002; Վան Կուկն ընդդեմ Գերմանիայի, թիվ 35968/97, ՄԻԵԴ 2003:
[146] Բարբորա Բուկովսկա, Ագնես Քալամարդ և Սեժալ Պարմեր, *ՔՔԻՄԴ 20-րդ հոդվածի մեկնաբանությանն ընդառաջ. Ատելության հրահրման արգելքի սահմանը,* 3 փետրվար, 2010թ:

հասարակության ավելի լայն շերտերի շրջանում խնդրի շուրջ իրազեկվածության բարձրացմանը[147]: Կոմիտեն պետք է նման մի առաջարկություն էլ Հայաստանի վերաբերյալ ներկայացնի:

Հայաստանի Հանրապետությունը չունի որևէ իրավական ակտ, որն ուղղակիորեն կարգելեր ատելության քարոզչությունը և քրեական պատասխանատվություն կսահմաներ վերջինիս համար: Հայաստանը տարածաշրջանի այն քիչ երկրներից է, որը որևէ տեղեկատվություն չի ներկայացրել ԺՀՄԻԳ կողմից պատրաստվող «Ատելության հիմքով կատարվող հանցագործությունները ԵԱՀԿ տարածաշրջանում. Միջադեպեր և Պատասխաններ» անունը կրող 2006 թվականի տարեկան զեկույցի համար[148]: ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելությամբ լցված և վիրավորական հայտարարությունները հաճախակի բնույթ են կրում հայ իրականության մեջ: Շատ ազգայնամոլ կազմակերպություններ հանդիսանում են ԼԳԲՏ անձանց դեմ ատելության քարոզչության հիմնական իրականացնողները, այնուամենայնիվ, չկա ատելության քարոզչության կամ ատելության հիմքով կատարված հանցագործության արձանագրված որևէ դեպք: Ազգայնամոլ խմբերն օգագործում են ԶԼՄ-ները, ներառյալ հեռուստատեսությունը, թերթերը և համացանցը իրենց հակա-ԼԳԲՏ ուղերձները տարածելու համար: Բացի դրանից, որոշ խմբեր ատելության քարոզչություն են իրականացնում Երևանում հոմոֆոբ և խտրականություն պարունակող պաստառների տարածմամբ:

«Մեկ Ազգը» նեոնացիստական մի շարժում է, որը բացահայտ կերպով խտրականություն է տարածում պայմանավորված անձի սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ: «Մեկ Ազգը» Երևանում և երկրի մյուս խոշոր քաղաքներում տարածում է պաստառներ, որոնք դատապարտում են ԼԳԲՏ համայնքին: «Մեկ Ազգի» պաստառներից մեկում նշված է. «Ասենք ոչ համասեռամոլությանը և էրոտիկ կայքերին»[149]: Այս կազմակերպությունը կապեր և դաշնակիցներ է ձեռք բերել մի շարք այլ ազգայնամոլ կազմակերպությունների հետ՝ խթանելով ԼԳԲՏ համայնքի նկատմամբ խտրականության տարածումը[150]: Այս դաշինքները տարածում են հականույնասեռական գաղափարներ պարունակող թերթիկներ և պաստառներ, ԶԼՄ-ների միջոցով անդրադառնում, ինչպես նաև սպառնում են ֆիզիկապես վնաս հասցնել ԼԳԲՏ անձանց[151]:

---

[147] Մարդու իրավունքների կոմիտե, Եզրափակիչ դիտարկումներ: Լեհաստան, ¶ 16 (2010) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/POL/CO/6:

[148] Մարդու իրավունքների Դանիայի ինստիտուտ, COWI, *Հոմոֆոբիա, Տրանսֆոբիա և Խտրականություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով,* սոցիոլոգիական զեկույց, [այսուհետ՝COWI], էջ 8, Հայաստան, տե՛ս. www.coe.int/t/commissioner/source/lgbt/armeniasociological_e.pdf:

[149] *IGLYO-ն դատապարտում է ԼԳԲՏՀ անձանց նկատմամբ ատելության քարոզչությունը,* http://www.iglyo.com/index.php?option=com_content&task=view&id=227&Itemid=34:

[150] Նույն փաստաթուղթը:

[151] Նույն փաստաթուղթը:

Ի պատասխան «Մեկ Ազգի» ատելություն սերմանող պաստառների տարածման՝ ՓԻՆՔ-ը դիմեց պետության համապատասխան մարմիններին պաշտպանելու ԼԳԲՏ համայնքի՝ ատելության քարոզչությունից և խտրականությունից զերծ լինելու իրավունքը: 2012 թվականի մարտ ամսին ՓԻՆՔ-ը պաշտոնական նամակ հղեց ՀՀ Արդարադատության նախարարությանը վերոնշյալ պաստառների վերաբերյալ, համաձայն որի «Մեկ Ազգի» կողմից այդ պաստառների տարածումը հակասահմանադրական է, քանի որ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն արգելում է խտրականությունը, իսկ հոդված 47-ը՝ ատելություն և բռնություն բորբոքելը[152]: ՀՀ Արդարադատության նախարարությունը, ի պատասխան վերոնշյալ նամակի, արձագանքեց, որ պաստառների տարածումը հակասահմանադրական չէ՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի, որն ապահովում է խոսքի ազատության իրավունքը[153]: Ուստի, պետությունը, չքրեականացնելով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության քարոզչությունը, նպաստել է ԼԳԲՏ համայնքի նկատմամբ խարանի և խտրականության աճին:

«Հայ Արիական Միաբանությունը», որը նույնպես նեոնացիստական խմբավորում է և բացահայտորեն քարոզչություն է իրականացնում նույնասեռականության դեմ, նույնպես նպաստում է Հայաստանում ատելության քարոզչությանը: 2006 թվականին, երբ ԱՄՆ-ը Ռիչարդ Հոգլանդին առաջադրվեց որպես ՀՀ-ում ԱՄՆ դեսպան, և նրա առաջադրումն անհայտ պատճառներով չեղյալ հայտարարվեց, խոսակցություններ էին տարածվել, թե Հոգլանդը նույնասեռական է: Այս առիթով Հայ Արիական Միաբանությունը հայտնեց, որ «իր շնորհակալությունն է հայտնում բոլոր հայորդիներից՝ կլինեն նրանք Հայաստանում, թե սփյուռքում, ովքեր պայքարեցին համասեռական Ռիչարդ Հոգլանդին ՀՀ-ում ԱՄՆ դեսպան նշանակելու դեմ»[154] : Բացի դրանից, այն նաև հայտնեց հետևյալի մասին. «Մենք շնորհակալ ենք նաև այն այլազգիներից, ովքեր և ի պաշտոնե, և մարդկայնորեն աջակցեցին ու ազատեցին հայությանը՝ հիվանդ դեսպան ունենալու տխուր հեռանկարից»[155] : Հարկ է նշել, որ Հոգլանդի առաջադրումը զայրույթ էր առաջացրել այս կազմակերպությունների շրջանում ոչ միայն Հոգլանդի ենթադրյալ սեռական կողմնորոշման, այլ նաև այն պատճառով, որ վերջինս բացահայտորեն չէր խոսել Հայոց ցեղասպանության իրողության վերաբերյալ[156] : Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ Հայ Արիական Միաբանությունը դիրքորոշումը խիստ հոմոֆոբ է:

---

[152] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, տե՛ս http://www.parliament.am/parliament.php?id=constitution&lang=eng:

[153] Skype հարցազրույց Մամիկոն Հովսեփյանի հետ, տե՛ս նշում 16:

[154] Artmika, *Ուշադրություն պահանջող ֆանատիկներն ասում են «շնորհակալություն» Հոգլանդի առաջադրումը չեղյալ հայտարարելու կապակցությամբ,* UNZIPPED: GAY ARMENIA (օգոստոս. 2007), http://gayarmenia.blogspot.com/2007/08/attention-seeking-bigots-say-thanks-for.html:

[155] Նույն փաստաթուղթը:

[156] Ամերիկայի Հայ Ազգային Կոմիտեն (ANCA) կոչ է անում Սենատին չեղյալ հայտարարելու Հոգլանդի առաջադրումը, հուլիս 18, 2006, http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=976; Skype հարցազրույց Քուիրինգ Երևանի անանուն անդամի հետ, *տե՛ս նշում* 86:

Պետության կողմից ոչ պատշաճ արձագանքը ԼԳԲՏ համայնքի դեմ ուղղված ատելության քարոզչության նկատմամբ, որը կարող է հրահրել մի շարք բացասական գործողությունների, անհավատալի է: Հարկ է նշել, որ Հայ Արիական Միաբանության առաջնորդ Արմեն Ավետիսյանը հրապարակավ ասել է, թե որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ նույնասեռական են և պատրաստել է վերջիններիս 7 հոգուց բաղկացած ցուցակը, որից հետո այն ուղարկել է ՀՀ Նախագահին և Վարչապետին՝ կոչ անելով նրանց «մաքրել ազգը հիվանդներից»[157] : Սակայն այդ անունները երբեք չեն հրապարակվել, իսկ պետությունը ո՛չ հանդես է եկել որևէ հայտարարությամբ, ո՛չ էլ քայլեր է ձեռնարկել այս զրպարտությունների դեմ:

Հայաստանում ատելության քարոզչության ամենաանհավական օրինակները, որոնք ներկայացված են այս զեկույցում, տեղի են ունեցել բոլորովին վերջերս: Սույն թվականի մայիսի 8-ին ԼԳԲՏ համայնքի դեմ ուղղված մի շարք դեպքերը հանգեցրել ե այն բանի, որ ԼԳԲՏ համայնքի համար ատելության քարոզչության և բռնության հրահրման խնդիրն այլևս ամենօրյա արդիականության է ձեռք բերել: Այդ օրը մի քանի ազգայնամոլներ պայթեցրեցին Երևանի ԼԳԲՏ-ընկերական ակումբներից մեկը՝ DIY ակումբը: Մի քանի օր անց ծայրահեղականները փչացրեցին ակումբի պատերը հակա-ԼԳԲՏ գրաֆիտի պատկերներով[158] : Այս միջադեպը տեղի ունեցավ ակումբի տնօրեններից մեկի՝ Արմինե (Ծոմակ) Օգանեզովայի վերաբերյալ հասարակական մեծ աղմուկի պատճառով, ով մեկնել էր Թուրքիա՝ մասնակցելու գեյ շքերթի: Ակումբի վրա հարձակումը իրականացվեց ազգային կարևոր տոնի՝ Շուշիի ազատագրման օրը, ինչը մատնանշում է այն մասին, որը հետո նաև հաստատվեց ազգայնամոլների կողմից ակումբի այրված պատերին մնացած գրաֆիտի պատկերների շնորհիվ, որ խնդիրը ոչ միայն նույնասեռականությունն է եղել, այլ նաև Արմինեի Թուրքիա մեկնելու ապազգային քայլը:

Այս դեպքը ոչ միայն փաստում է այն մասին, որ ազգայնամոլները ԼԳԲՏ համայնքի համար մեծ վտանգ են ներկայացնում, այլև այն, որ նրանց կողմից որդեգրած բռնության հրահրման այս քաղաքականությունը շարունակական բնույթ է կրում: Ակումբի պատերին արված գրաֆիտի պատկերներում գրված է. «Ծոմակ, չենք թողի, որ շնչես» և «ինչքան էլ վերանորոգես, միևնույն է գալու ենք»[159] : Չնայած անձի նկատմամբ բացահայտ արված այս սպառնալիքներին՝ պետությունը որևէ քայլ չի ձեռնարկել սանձելու այս սադրանքը: Չնայած երկու երիտասարդ ձերբակալվեցին որպես կասկածյալներ, այնուամենայնիվ, ՀՀ ընդդիմադիր կուսակցություններից

[157] COWI, *տե՛ս նշում* 148, էջ 13:
[158] Agence France Press, *Հայաստանում ատելության գրոհները բացահայտեցին հակագեյ ատելության քարոզչությունը* (մայիս 25,2012) http://www.france24.com/en/20120525-armenia-hate-attacks-expose-anti-gay-hatred:
[159] Youtube, «Մեկ ուրիշ հարձակում DIY ակումբի վրա» (մայիս 25, 2012) http://www.youtube.com/watch?NR=1&feature=endscreen&v=Q0rGf4FieHQ:

մեկի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) անդամները վճարեցին գրավը որպես խափանման միջոց, իսկ մի օրինաստեղծ գործունեությամբ զբաղվող անձ պաշտպանեց երիտասարդներին՝ ասելով, որ «այդ երիտասարդները շարժվել են մեր հասարակության և ազգային գաղափարաբանության համատեքստում, ճիշտ ձևով»[160]:

Այս դեպքերի հետևանքով Հայաստանում ավելացան ԼԳԲՏ խնդիրների վերաբերյալ հանրային քննարկումները, քանի որ նեո-նացիստական խմբավորումները անձի ոչ ավանդական ապրելակերպը ներկայացնում են ապազգային գաղափարախոսության շրջանակներում[161] : Երկու երիտասարդ տղաներ, ովքեր պնդում էին, որ իրենք են կատարել այս ոճրագործությունը հարցազրույց տվեցին տեղի հեռուստաընկերություններից մեկին՝ նշելով, որ «DIY ակումբը չպետք է այստեղ գոյություն ունենա, Ծոմակի նմաններն այստեղ չպետք է գոյություն ունենան: Ծոմակը գնում ու մասնակցում է գեյ շքերթի ու ներկայացնում է իր ակումբը որպես նորմալ, բայց բոլոր գեյերն այնտեղ են լինում»[162]:

Պետության կողմից ոչ պատշաճ արձագանքն այս հարձակումների և սպառնալիքների վերաբերյալ փաստում են պետության ոչ լուրջ վերաբերմունքը ՔՔԻՄԴ 20-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունների նկատմամբ: Ակումբի պայթյունից որոշ ժամանակ անց ՀՀ Ազգային Ժողովի փոխխոսնակը հայտարարեց. «Ես, որպես Հայաստանի քաղաքացի եւ ազգային-պահպանողական կուսակցության անդամ, միանգամայն ճիշտ ու արդարացված եմ համարում երկու հայ երիտասարդների ընդվզումը մեր երկրում այլասերության որջ ստեղծած եւ հասարակությունն իր բարոյական արժեքներից հեռացնելու նպատակ ունեցող համասեռամոլների դեմ»[163]: Մայիսի 21-ին էլ ՀՅԴ անդամ Արթուր Աղաբեկյանը նշեց, որ «ողջունում է, որ հայ երիտասարդները ոչ միայն իրենց ահազանգն են հնչեցնում, այլեւ կոնկրետ քայլերով են պայքարում մեր ազգային արժեքներն ու հավատը խարխլող արատների դեմ» [164] : Պետական պաշտոնյաների կողմից արված այս հայտարարությունները բռնության կոչ են հանդիսանում ուղղված ԼԳԲՏ համայնքի դեմ, որի արդյունքում պետությունը խախտում է ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունները:

Այս դեպքից երկու շաբաթ անց մի շարք հասարակական կազմակերպություններ, այդ թվում և ԼԳԲՏ կազմակերպություններ Երևանում կազմակերպեցին «Բազմազանության երթ»՝ նշելու ՄԱԿ-ի կողմից սահմանված «Մշակութային

---

[160] AFP, տե՛ս նշում 156:

[161] Նենսի Ագաբյան, The Armenian Weekly, *Նամակ. Դուք իրավունք չունեք սպառնալու, կամ բռնություն կիրառելու ԼԳԲՏ հայերի նկատմամբ* (մայիս 21, 2012):

[162] Youtube, «Ֆաշիստների ինքնախոստովանությունը» (մայիս 20, 2012) http://www.youtube.com/watch?v=1o5XhjSQTh8&feature=relmfu:

[163] AFP, *տե՛ս նշում* 156:

[164] Ագաբյան, *տե՛ս նշում* 158:

բազմազանության համաշխարհային օրը»[165] : Չնայած այս միջոցառումը ներկայացնում էր քաղաքացիական հասարակության լայն զանգված՝ նեո-նացիստական խմբավորումների կողմից այն պիտակավորվեց որպես գեյ շքերթ, ովքեր հարձակվեցին երթի մասնակիցների վրա՝ վերջիններիս վիրավորելով և նրանց նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելով[166] : Ոստիկանությունը միջամտեց՝ կանխելու բռնության հետագա ընթացքը, սակայն, համաձայն Դաշնագրի 19-րդ հոդվածի, խախտվեց քաղաքացիական հասարակության անդամների ազատ արտահայտվելու իրավունքը, քանի որ զայրացած ամբոխը խոչընդոտ հանդիսացավ խաղաղ երթի իրականացման համար:

Ատելության քարոզչությունը, որը շարունակական բնույթ է կրում և հանդուրժվում է պետության կողմից, փաստում է այն մասին, որ Հայաստանը չի իրականացրել Դաշնագրի 20-րդ հոդվածի համաձայն ստանձնած իր պարտավորությունները, քանի որ չի պաշտպանել ԼԳԲՏ համայնքին ատելության քարոզչությունից: Տարիների ընթացք ստացած ստելության քարոզչության արդյունքում ազգայնամոլ և նացիստական խմբավորումներն իրականացրեցին իրենց սպառնալիքները՝ պայթեցնելով գեյ-ընկերական ակումբը և դեռևս շարունակում են խոսել Հայաստանը ԼԳԲՏ անձանցից «մաքրելու» կարիքից, ում ազգի սպառնալիք են համարում: Ուստի, պետությունը պարտավոր է ձեռնարկելու բոլոր հնարավոր քայլերը զսպելու այս քարոզչությունը, քանի դեռ այն ԼԳԲՏ համայնքի նկատմամբ էլ ավելի մեծ բռնության չի հրահրել:

---

[165] Նարեգ Սեֆերյան, *«Հոմոֆոբիայի համար լավ օր Երևանում»*, Armenian Weekly (մայիս 22, 2012), http://www.armenianweekly.com/2012/05/22/a-good-day-for-homophobia-in-yerevan/; Յելենա Օսիպովա, *Երևանում բազմազանության շքերթը տապալվեց ազգայնամոլների կողմից,* http://lena-globalchaos.blogspot.fr/2012/05/diversity-march-in-yerevan-hijacked-by.html; *Ազգայնամոլները հարձակվել են Հայաստանի մայրաքաղաք Երևանում կազմակերպված բազմազանության երթի վրա՝ կոչելով այն «գեյ շքերթ»* UNZIPPED: GAY ARMENIA (մայիս, 2012), http://gayarmenia.blogspot.fr/2012/05/neo-nazi-attack-diversity-march-in.html:

[166] Նույն փաստաթուղթը:

## Է. Առաջարկություններ

Հայաստանի Հանրապետությունը պետք է ձեռնարկի օրենսդրական, վարչական և դատական մի շարք միջոցառումներ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը, դրանց նկատմամբ հարգանքին և խթանմանը՝ անկախ անձի սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից: Այդ նպատակով Մարդու իրավունքների կոմիտեի առաջարկությունները հետևյալն են.

1. Հայաստանը պետք է ընդունի հակախտրական օրենսդրություն, որը կդատապարտի խտրականությունը՝ կախված անձի սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից:

2. Հայաստանը պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկի անձի նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության բոլոր ձևերի վերացման համար՝ համընդգրկուն հակախտրական օրենդրություն ընդունելու միջոցով: Մասնավորապես, պետությունը պետք է ներկայացնի իրավական ակտերի այնպիսի համընդգրկուն համակարգ, որը կքրեականացնի ատելության քարոզչությունը և կկանխի պետական պաշտոնյաների կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականություն պարունակող հայտարարություններով հանդես գալը:

3. Հայաստանը պետք է քայլեր ձեռնարկի վերացնելու անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնությունը ՀՀ Զինված ուժերում և ազատազրկման վայրերում: Մասնավորապես, պետությունը պետք է պաշտպանի ԼԳԲՏ անձանց խտրականությունից, ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից: Պետությունը պետք է վերանայի ՀՀ զինվորական ծառայության վերաբերյալ օրենքները և միջոցներ ձեռնարկի սեռական կողնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ենթադրյալ հանցագործությունների լիակատար քննությունը, իսկ հարկ եղած դեպքում նաև դատական կարգով պատշաճ հետապնդումն ու պատասխանատվությունն ապահովելու համար:

4. Հայաստանը պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու անձանց իրենց իրավունքներից օգտվելու հնարավորությունը և ծառայությունների, ներառյալ կրթության և աշխատանքի, մատչելիությունը՝ անկախ անձի սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից: Մասնավորապես, պետությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այս առաջարկությունների իրականացմանը մայրաքաղաք Երևանից դուրս:

5. Հայաստանը պետք է բարելավի իր հանրային առողջապահական քարոզարշավը՝ վերացնելու խտրականությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

6. Հայաստանը պետք է քայլեր ձեռնարկի ընդունելու այնպիսի իրավական ակտեր, որոնք կթույլատրեն տրանսգենդեր անձանց սեռափոխությունը և կապահովեն նրանց ստանալու անձը հաստատող այնպիսի փաստաթղթեր, որոնք արտացոլում են տվյալ անձի գենդերային ինքնությունը: